II

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի
(Պատմաաշխարհագրական դիտարկումներ)

ՌԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սյունիքը հանդիսանում է Մեծ Հայքի թագավորության միակ աշխարհը, որի տարածքը գրեթե ամբողջությամբ մանում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից վերահսկվող տարածքների մեջ: Սյունիքի աշխարհացույցյան նկարագրությունը, համեմատած Այրարատի, Ծոփքի, Տավրուբերանի և Վասպուրականի հետ, առանձին մանրամասնությամբ աչքի չի ընկնում, սակայն այդ բացը մեծապես հալթահարվում է մի այնպիսի արժեքավոր սկզբնաղբյուրով, ինչպիսին է Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը[1]: «Աշխարհացույց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Սյունիքն ունի հետևյալ նկարագրությունը. «Թ. Աշխարհ Սիւնիք. ընդ մէջ կալով Երասխայ եւ Արձախայ, յելից Այրարատայ. ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղարքունի հոմանուն ծովովն, զՍոսթս[2], զԱղահէճ, զՇղուկն, զՀաբանդ, զԲաղս, զՁորայ[3], զԱրեւիս, զԿաւական մինչեւ ցՆակորզեան քաղաք, անցնիւր հոմանուն գետովք, եւ Աղաւնոյ գետ: Լինի մուրտ եւ երերի[4] եւ նուռն աղնիւ»[5]: Չնայած «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրությունը էական տարբերություններ չի պարունակում, մենք ավելորդ չենք համարում այն ևս մեջբերել ամբողջությամբ. «Իններորդ՝ Սիւնիք յելից կայ Այրարատայ ի մէջ Երասխայ եւ Արցախայ: Ունի գաւառս երկոտասան. Երնջակ, Ճահուկ, Վայու ձոր, Գեղարքունի եւ ծովն, Սոտք, Աղահէճ, Ծղուկք, Խաբանդ, Բաղք, Զորք, Արեւիք, Կաւական: Լինի ի նմա մուրտ եւ գերեր, եւ նուռն եւ արմտիք[6]»[7]:

---

1 Ս ա ե փ ա ն ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Պատմութիւն նահանգին Սիսական (այսուհետև՝ Սա. Օրբելյան). Թիֆլիս, 1910:

2 Անշուշտ, «Ս»-ն ավելորդ է: Պետք է լինի «Սոթս»:

3 Հավանարար գոյություն է ունեցել նաև «Զորայք» ձևը, որն այլ աղբյուրներում չի վկայված:

4 Պետք է լինի «Գերերի»:

5 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ ԱՄԽ). Վենետիկ, 1881, էջ 33:

6 Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի №582 ձեռագրում (179 բ), որի «Աշխարհացույց»-ի տեքստը հրատարակել է Աշ. Արբահամյանը, «արմտիք» բառին փոխարինում է «ամուր տեղիք» արտահայտությունը (տե՛ս նաև К. П. П а т к а н о в. Армянская география VII века по р. Х, СПб., 1877, с. 19): Սակայն, մեր կարծիքով, նման սրբագրությունը միանգամայն հիմնավորված է և ընդունելի: Այն արտահայտում է բնագրի ներքին տրամաբանությունը:

7 Ա. Դ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 350: Տե՛ս նաև К. П. П а т к а н о в. Նշվ. աշխ.:

Հարկ է խոստովանել, որ «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի[8] համեմատությունը գավառանունների ճշգրտման հարցում էական փոփոխություններ չի ծնում, սակայն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Օգտագործելով Ստ. Օրբելյանի տվյալները, ինչպես նաև Ղ. Ինճիճյանի քննության արդյունքները[9], մենք ստանում ենք ներքոգրյալ պատկերը.

1) Երնջակ, Երընջակ, Երնճակ, Երընճակ, Երընջակք ..... Երնջակ
2) Ճահուկ, Ջահուկ, Ճակուկ ..... Ճահուկ
3) Վայոց ձոր, Վայու ձոր, Վայիոց ձոր, Վայուձոր, Վայոյ ձոր, Վայոձոր, Մայրոձոր ..... Վայոց ձոր
4) Գեղաքունի, Գեղարքունի, Գեղարգունի ..... Գեղաքունի
5) Սոսթս, Սոտք, Սոոտքս, Ոսոտք, Ոստք, Կոտայք, Սոթք ... Սոթք, Սոտք
6) Աղահէճ, Աղահէճք, Աղայահէճք, Աղահէջ ..... Աղահէճ
7) Ծղուկն, Ծղուկ, Ծղակ, Ծղուկք, Ծղունք, Ծղակք .... Ծղուկ, Ծղուկք, Ծղուկն ?
8) Հարանգ, Խարանդ, Հարբանդ, Հարբանա, Հանբանդ, Բարբանդ[10], Բարրանք ..... Հարանդ
9) Բաղք, Բաղս, Բողք, Բառք, Բալք ..... Բալք
10) Ձորք, Ձորայ ..... Ձորք, Ձորայք?
11) Արեւիս, Արեւիք, Արևինք, Արևք, Արևելիք, Արևիկք, Արևիգք ..... Արեւիք
12) Կօսական, Կուսական, Կաւսական, Կաւսան Սիսական, Կոսական, Կոսականք, Կովսական ..... Կաւսական

«Աշխարհացոյց»-ի լավագույն դիտակներից մեկը՝ ակադեմիկոս Ս. Երեմյանը, «...զԱրեւիս, զԿօսական մինչեւ ցՆակորզեան քաղաք, անցնիւր հոմանուն դետովք, եւ Աղաւնոյ գետ» հատվածը սրբագրել է «...զԱրեւիս, զԿովսական հոմանուն դետովք մինչեւ ցՆակորզեան քաղաք և անցան իւր, եւ Աղուան գետ»[11]: Նման սրբագրությունից հետո նա հիշյալ հատվածը թարգմանել է «...Արեվիք, Կովսական համանուն դետերով, մինչև Նակորզան քաղաքը իր գետանցքով, և Աղուան գետը»[12], իսկ Աշ. Աբրահամյանը՝ «...Արևիք, Կովսական՝ մինչև Նակորզյան քաղաքը, յուրաքանչյուրը համանուն գետով և Աղվան գետը»[13]: Հանգամանալից քննության ենթարկելով սույն հատվածը, մենք հակված ենք կարծելու, որ «հոմանուն գետովք»-ի տեղափոխությունը գոնե բնագրային նյութով արդարացված չէ: Եթե բնագրային շարադրանքում այն կարող է վերաբերել միայն Կովսականին, ապա սրբագրության դեպքում նոր բովանդակություն է ձեռք բերում: Թերևս ճիշտ կլիներ «հոմանուն դեաովք»-ը դարձնել «հոմանուն դետով» և ամեն ինչ կընկներ իր տեղը: Ս. Երեմյանը ճիշտ է

---

8 Օգտագործել ենք Մատենադարանի №582, 1267, 1459, 1482, 1486, 1518, 1717, 1770, 1883, 2019, 2191, 2291, 2370, 3691, 4284, 5613, 7993 ձեռագրերը:

9 Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 299-300:

10 Հավանաբար գրիչները չփոթել են «խ» և «բ» տառերը:

11 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 109:

12 Նույն տեղում, էջ 110:

13 Անանիա Շիրակացի. Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 295:

հասկացել «անցնիւր» արտահայտությունը, սակայն ոչնչով արդարացված չէ այն «անցսն իւր» դարձնելը[14]: Խնդիրն այն է, որ խոսքը մեկ գետանցի մասին է, ուստի «ս»-ի ավելացումը հիմնավորված չէ: Աշ. Աբրահամյանը, հավանաբար ապդվելով Ս. Երեմյանի սրբագրությունից և մեկնաբանությունից, հիշյալ հատվածը թարգմանելիս ավելացրել է «յուրաքանչյուրը» բառը, որը նույնպես հիմնավորված չէ: Ավելին, նա չի էլ փորձել թարգմանել «անցսն իւր»-ը, որի հետևանքով աղավաղվել է բնագիրը: Վերջապես ոչնչով պատճառաբանված չէ «Աղաւնոյ գետ»-ը «Աղուան գետ» սրբագրելը[15], որը հարցին անծանոթ հայագետներին կարող է միայն թյուրիմացության մեջ գցել:

Բնագրի մեր ընկալումը ծնում է մի հետաքրքիր հարցադրում: Իսկ որտե՞ղ է գտնվել Նակորզեան քաղաքը և ո՞ր գետի վրա է եղել նրա գետանցը: Ս. Երեմյանը նշված քաղաքը տեղադրել է Խուդափերինի կամրջի հարևանությամբ[16], որն, իհարկե, տարակուսանք է ծնում: Հեղինակը, ելնելով Սա. Օրբելյանի հաղորդումից, Խուդափերինի կամրջի տեղում տեղորոշում է Բարավազի կամուրջը[17]: Այսօրինակ տեղադրությունը, փաստորեն, կիսում է Աշ. Աբրահամյանը, որի կարծիքով Բաշունիք գավառը, իր մեջ ունենալով Նակորզան բնակավայրը, Արևելյան կամ Մյուս Բազքն էր, որն ընկած էր Աղավնո գետից արևելք[18]: Եվ եթե Աշ. Աբրահամյանը Բաշունիքը տեսնում է Աղանվո կամ Հադարու գետից արևելք, կապելով նման տեղադրությունը Նակորզանի տեղորոշման հետ, ապա Ս. Երեմյանի բոլոր քարտեզներում էլ Հադարուն համարվում է Սյունիքի հարավարևելյան սահմանագիծ, ինչը բնավ էլ հարիր չի իր՝ Նակորզանի տեղադրությանը: «Աշխարհացույց»-ի նկարագրությունը հստակ հուշում է, որ Աղավնո կամ Հադարու գետը եղել է Սյունիքի հարավարևելյան սահմանը: Անուղղակիորեն այդ է հաստատում սյունյաց պատմիչի հաղորդումներից մեկը, ըստ որի X դ. սյունյաց Սմբատ իշխանը «...զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչև ի Հակարի. բայց փոքրիկն Բարկէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»[19] հաղորդումը, որում դժվար չէ տեսնել, որ Հադարու

---

14 Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. Ա (Ա-Կ), Երևան, 1979, էջ 248:

15 Սա. Օրբելյանը, որը հիանալի քաջատեղյակ է Սյունյաց նահանգի աշխարհագրությանը, գետը հիշում է «գետ Աղաւնոյ» (էջ 80, 86) և «գետ Աղունոյ (էջ 310, 486–487) անվանումներով, որոնցից երկրորդը, եթե ողորմական աղավաղում չէ կապված արտագրությունների ժամանակ «աւ» երկհնչյունի և «ու»-ի շփոթի հետ, ապա գետանվան ժողովրդական արտասանությունն է: Հետևաբար գետանունը «Աղուան» դարձնելը և այն «Աղուանք» հասկացության հետ կապելը, մեզմ ասած, ոչ միայն գիտականորեն հիմնավորված չէ, այլև ջուր է լցնում ազգրեջանական որոշ վայ-պատմաբանների ջրաղացին: Ըստ երևույթին, Ս. Երեմյանն ավելի ուշ չպաշտպանեց իր տեսակետը, որովհետև նրա «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298–385 թթ.)» ուսումնական քարտեզում գետանունը արված է «Աղավնոյ գետ» դրությամբ:

16 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը X դարի վերջին և XI դարի սկզբին.– «ՀՍՍՀ տարեգիրք». Երևան-Մոսկվա, 1961, քարտեզ թիվ 105: Այսպես է ցույց տրված նաև հեղինակի այլ քարտեզներում:

17 Նույն տեղում:

18 Ս ա. Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1985, էջ 432, ծանոթ. 218: Թարգմանիչը տուրք է տալիս նախորդ ուսումնասիրողների կատարած սխալին և Հադարու գետի անվանումներից մեկը համարում է Աղուանը:

19 Ս ա. Օ ր բ ե լ յ ա ն. էջ 519: Մինչև դրեթե վերջին ժամանակներս Հադարու գետը Որոտան վտակն ընդունելուց հետո կոչվում էր Բարգուշատ, հետևաբար զարգացած մեջ-

գետն արևելքից եզերել է Սահակ իշխանի տիրույթները: «Աշխարհացույց»-ի և Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունները հաղիվ թե կարելի է կասկածի տակ առնել, քանի որ Հագարու գետից արևելք ընկած շրջանում հստակ արտահայտված բնաշխարհագրական սահմաններ ի զեմս լեռնաշղթայի կամ քիչ թե շատ նշանակալից գետի, չկան: Աղավնո գետը Սյունիքի հարավ-արևելյան սահման դիտարկելու դեպքում, իսկ դրա օգտին են վկայում բոլոր սկզբնաղբյուրները, Նակորզանն իր վերոհիշյալ տեղագրության դեպքում հայտնվում է Սյունիքի սահմաններից դուրս, այն դեպքում, երբ հայտնի է, որ նշված քաղաքը սյունյաց իշխանների տիրույթն էր:

«Աշխարհացույց»-ի նկարագրությունից հստակ հետևում է, որ Նակորզանը գտնվել է Աղավնո գետից արևմուտք. «...զԱրեւիս, զԿաւսական մինչեւ ցՆակորզեան քաղաք, անցն իւր հոմանուն գետով, եւ Աղաւնոյ գետ»: Նկարագրությունը կատարվում է արևմուտքից արևելք ուղղությամբ, հետևաբար, ինչպես այդ հաստատվում է Ստ. Օրբելյանի Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակով, Նակորզանը կամ Նակորզեանը պետք է փնտրել Կովսականից Արևելք Բաղք գավառից առաջացած Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառի տարածքում, որտեղ X և հետագա դարերում հիշատակվում է գյուղի վերածված Նակորզանը: Շատ հնարավոր է, որ վերջինս պատկանում էր Աղավնո գետի ավազանի բնակավայրերի թվին[20], սակայն միանգամայն հստակ է, որ այն չէր տեղադրվում անմիջապես Աղավնո գետի ափին և գտնվում էր ավելի արևմուտք, Երասխից ոչ շատ հեռու, Քարավազ կոչված վայրի մերձակայքում, որի մասին խոսելիս Սյունյաց պատմիչը գրում է. «... եբեր մինչ յեղը Երասխայ ի տեղին որ կոչի Քարավազ որ յերիս ճղէ զՋուրն»[21]: Այս վերին աստիճանի հետաքրքիր տեղեկությունը պարզում է մի քանի իրողություններ: Նախ, որ Քարավազը, եթե անգամ կամուրջ ունեցել է, այն դեռևս կառուցված չէր Ստ. Օրբելյանի օրերում, երկրորդ, որ այն ոչ մի դեպքում չի կարող նույնանալ Խուդափերինի կամրջի շրջանին և վերջապես, որ նրա հիմնական ընորոշիչ հատկանիշը Երասխի ջրերը երեք մասի բաժանելն էր: Երասխի հիշյալ հատվածի տեղագրական 1:200000-ոց մասշտաբի քարտեզի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Քարավազ կոչվող վայրը կարող էր տեղադրվել Երասխի ձախ ափին՝ Ծավ գետակի՝ նրա մեջ թափվելու վայրից շուրջ 1 կմ դեպի հյուսիս-արևելք ընկած վայրում, որտեղ գետը բաժանվում է երեք ճյուղի, որոնք կրկին միանում են շուրջ երկու կմ հոսելուց հետո՝ առաջացնելով մի քանի ոչ մեծ կղզիներ: Եթե մեր տեղադրությունը համապատասխանում է պատմական ճշմարտությանը, ապա Նակորզանը գտնվելու էր Քարավազից և Երասխ ու Ողջի գետերի ջրկիցից արևելք, Երասխի ձախ ափին՝ Հագարու կամ Աղավնո և Ողջի գետերի միջև ընկած տափարակում: Ստ. Օրբելյանը, մի առիթով անդրադառնալով կրոնավոր

Նադարում ձևավորված Քաշունիք գավառը և դրանով իսկ աշխարհացույցյան Բաղք գավառը սարածվում էր մինչև Հագարու գետի և Երասխի ջրախառնուրդը, որի մերձակայքում էլ պետք է գտնվեր Բարկուշատ ամրոցը (էջ 13, 331, 391-392, 397, 417):

20 Նույն տեղում, էջ 86. «... հասանէ մինչև ի շրջանս գետոյն Աղաւնոյ, հանդէպ եկեղեցւոյն Նակորզանաւ»:

21 Նույն տեղում, էջ 81:

գարձած ու Գյուտ անունը վերցրած Վասակ իշխանի գործունեությանը, գրում է, թե պարսից թագավորի որդին՝ որսի գալով հիշյալ վայրերում գտնվող Մուղանի դաշտին հայող մի լեռ, հանդիպում է մի երեցի, որը նրան լեռում հասցնում է մինչև Երասխի ափը՝ Քարավաղ կոչվող վայրը[22]: Դատելով ըստ ամենայնի՝ այդ լեռը վերջին ժամանակներս մահմեդական բնակչության կողմից Աղջուխ անունն ստացած 548 մ բարձրությունն ունեցող լեռնակն է: Սա. Օրբելյանի մեկ այլ տեղեկության համաձայն, սյունյաց իշխան Բարիկը՝ «...անցեալ ընդ Երասխ գետ՝ չինէ գեղաբաղաք մի՝ կոչելով զանուն տեղւոյն Նախկորղան, որ թարգմանի նախ գնա կորգեալ առ ինքն յիւր հայրենեացն»[23]: Մի բան կարելի է, թերևս, ենթադրել, որ սյունյաց իշխանը՝ անցնելով Երասխը, անմիջապես մտել է Սյունիք, ուստի գետանցը պետք է փնտրել Երասխի վրա, որի անունով էլ այն կոչվել է: Հարարու գետի՝ Երասխի մեջ թափվելուց ոչ շատ հարավարևմուտք Երասխն ունի ծանծաղուտ, որտեղ էլ, թերևս, գտնվել է գետանցը, ուստի հավանականության մեծ պաշարով Նակորղանը կամ Նակորգեանը կարելի է տեղադրել դրա մերձակայքում: Նման տեղադրության դեպքում արդեն հետաքրքիր մեկնաբանություն են ստանում մինչհեղափոխական Մինջեվան և Փերչիվան կոչվող բնակավայրերի անունները, որոնք հնում համապատասխանելու էին Միջնավան և Վերջնավան անվանումներին:

Ի մի բերելով վերը կատարած քննության արդյունքները, կարծում ենք, որ Սյունիքի նկարագրությունը ներկայացրել է հետևյալ պատկերը. «Ինն երորդ աշխարհ Սիւնիք. ընդ մէջ կալով Երասխայ եւ Արձախայ, յելից Այրարատոյ. ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղարքունի՝ հոմանուն ծովովն, զՍոթք, զԱղահէճ, զՄղուկ, զՀաբանդ, զԲազք, զՁորս (կամ զՁորայս– Հ.Բ.), զԱրեւիս, զԿաւռական՝ մինչեւ ցՆակորգեան քաղաք եւ անցն իւր, հոմանուն գետով, եւ Ագաւնոյ գետ: Լինի ի նմա մուրտ, գերերի եւ նուռն ազնիւ եւ արմաւք»:

Անդրադառնալ Սյունիքին և ուշադրությունից դուրս թողնել հիշյալ երկրամասի օրբելյանական նկարագրությունը՝ պարզապես անհնարին է, ուստի, ելնելով քննության շահերից, այն նույնպես մեջ ենք բերում: Սյունյաց պատմիչը, որ ձեռքի տակ ունեցել է «Աշխարհացույց»-ը, նաև օգտագործել է մի շարք այլ աղբյուրներ, որի հետևանքով նկարագրության մեջ հայտնվել են նոր մանրամասներ: Այսպես, սյունյաց պատմիչը գրում է. «Իսկ (Սյունիքը – Հ.Բ.) գաւառք ունի երկոտասան. առաջինն որ ունի զբուն գահ իշխանացն և հայրապետաց՝ Մղուկ գաւառ անուանեալ ի Մղկայ գաւառապետէ: Երկրորդ՝ Վայոց ձոր որ ի հասարակական գիպուածոց ոգլոց և աշխարանաց կոչեցաւ Վայոց ձոր: Երրորդ՝ Գեղաքունի որ ի հայկեանն Գեղամայ կոչեցաւ Գեղարքունի: Չորրորդ՝ Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք: Հինգերորդ՝ Աղահէջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և Խոժոռարերդ: Վեցերորդ՝ Հաբանդ գաւառ: Եօթներորդ՝ Բազք գաւառ, որ այժմ կոչի Սճէն, որ ի Բազակայ անուանեցաւ: Ութերորդ՝ Կովսական գաւառ, որ այժմ Գրհամ

22 Նույն տեղում:
23 Նույն տեղում, էջ 40:

կոչեն: Իններորդ՝ Արևիք գաւառ, որ այժմ կոչի դաշտօն և Մեղրի: Տասներորդ՝ Ձորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, և այժմ կոչի Կապան: Մետասաներորդ՝ Երնջակ գաւառ և Գողթն: Երկոտասաներորդ՝ Ճահուկ գաւառ, որ և ձորն որ Շահապաւնս կոչի:

Ահա այսոքիկ են գաւառք երկոտասանք գլխաւորք Սիւնեաց: Բայց այլ ևս ունի գաւառս յոլով զորս ոչ յիշեցաք. է որ փոխեալ են անուանք սոցա. է որ յայլ և յայլ գաւառս բաժանեալ են»[24]:

Որոշ մանրամասներ է ավելացնում մեր գիտելիքներին նաև Ստ. Օրբելյանի աշխատության մեջ պահպանված Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակը: Պարզվում է, որ զարգացած միջնադարում Ծղուկ գավառից առանձնանում է մի մասը և Այլախ գյուղի անունով ստանում Այլախ գավառ անվանումը[25]: Բաղք գավառի ավատատիրական տրոհման հետևանքով մի հատվածը պահպանեց Բաղք անունը կոչվելով նաև Աճեն, իսկ մյուս հատվածը ստացավ Մյուս Բաղք կամ Քաչունիք անունը[26]:

Սյունիքի գավառների տեղադրությունը, չնորհիվ սյունյաց պատմիչի հաղորդած տեղեկությունների, մասնավորապես Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակի[27], դժվարություն չի ներկայացնում: Ուսումնասիրողները դրանց հիման վրա մեծ ճշգրտությամբ որոշել են Սյունիքի գավառների սահմանները[28], որոնք, բոլորովին էլ դժվար չէ համոզվել, որպես կանոն, համընկնում են բնական աշխարհագրական սահմաններին: Երնջակ գավառը, որ «Աշխարհացույց»-ի նկարագրության մեջ գավառացանկի առաջին գավառն է[29] և, համաձայն Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակի, զբաղեցրել է Երնջակ կամ Ալինջա-չայ, Բստաջուր կամ Գիլանչայ գետակների վերին հոսանքների շրջանը: Հենց սկզբից նշենք, որ Երնջակ ամրոցից իր անունն ստացած գավառը վարչական առումով բավականին անկենսունակ միավոր էր, որովհետև երկու ձորահովիտների վերին շրջանները գործնականում իրար հետ ճանապարհներով, եթե չհաշվենք լեռնային կածաններն ու արահետները, կապված չեն: Ուստի, բնականաբար, հարց է ծագում, թե ինչո՞ւ է նմանատիպ գավառ ստեղծվել: Ուշադրության արժանի է այն փաստը, որ Ստ. Օրբելյանը Սյունիքի 11-րդ գավառը հիշատակում է «Երնջակ գավառ և Գողթն» ձևով, որն անուղղակիորեն խոսում է դրանց միասնականության մասին, իրողություն, որում կհամոզվենք առաջիկայում: Սյունյաց պատմիչի համաձայն, գավառի կենտրոն հանդիսացող Երնջակ ամրոցը Սիսակի տոհմից Երնջիկ տիկնոջից էր ստացել իր անունը և անառիկության պատճառով կոչվել «զանհնարին ամուրն Երնջակ»[30]: Ապահովության և թշնամու համար անմատչելիութ-

24 Նույն տեղում, էջ 12–13:
25 Նույն տեղում, էջ 511:
26 Նույն տեղում, էջ 518-519:
27 Նույն տեղում, էջ 509-523:
28 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 229–300: Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893: Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Հ. Բ. Պլեզիկեան, Վիեննա, 1907, էջ 225–227: Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 32, 39, 44, 47, 51, 56, 60, 61, 64, 80, 82: Թ. Խ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 191-218: Ն ո ւ յ ն ի՝ Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով). Երևան, 1966, էջ 26–56:
29 Ստ. Օրբելյանի մոտ Տաթևի հարկատու գյուղերի ցուցակում տասնմեկերորդն է:
30 Ստ. Օրբելյան, էջ 13:

յան պատճառով այն վերածվել էր «տուն գանձու և հարկաց աշխարհին»[31]: Հետագայում, երբ թշնամիները տիրացան Երնջակ ամրոցին, վերջինս շարունակեց պահպանել գանձատան և արքունի կարևոր ամրոցի իր դերը: Ավելին, ում հաջողվում էր տիրել Երնջակին, նա գործնականում կարողանում էր իր իշխանությունը տարածել ամբողջ Գողթնի վրա: Ներկայումս Երնջակը հայտնի է Ալինջա-կալասի անունով, որը սրա անվանման աղավաղումն է: XII դ. ամրոցին տիրացան Օրբելյանները: Երնջակում են գտնվում որ. Գևորգի վանքը, Զավաչրի վանքը, Ասլրակունիս նշանավոր գյուղը, Շահկերտ (ներկայումս՝ Ղաղանչի) ավանը, Ամասրովանք լեռնային գյուղը և այլ բնակավայրեր: Պատմագիտության մեջ բավականին տարածում է ստացել այն տեսակետը, որ իբր ներկայիս Նասրվաղ գյուղի անունը աղավաղումն է Մեսրոպավանք գյուղանվան, իսկ Մեսրոպավանք բնակավայրն էլ իր անունը ստացել է այնտեղ քարոզած Մեսրոպ Մաշտոցից: Չի բացառվում, իհարկե, որ Մեսրոպ Մաշտոցը ճգնել և քարոզել է այդ գյուղում, սակայն, ինչպես ցույց է տալիս հարկացուցակը, գյուղը կոչվել է ոչ թե Մեսրոպավանք, այլ Ամասրովանք, որն էլ հնչյունափոխվելով վերածվել է Նասրվաղի: Հաջորդ, Ճահուկ, գավառը զբաղեցրել է Նախճավան գետի (ներկայումս՝ Նախչավան-չայ) և նրա Ճահուկ (ներկայումս՝ Ջահրի-չայ) ու Շահապոնս (ներկայումս՝ Շահբուղ-չայ) վտակների ավազանի մեծ մասը, բացառությամբ Նախճավանի տափարակի: Գավառում նշանավոր էին Ճահուկ (այժմ՝ Ջահրի), Պահեստ (այժմ՝ Պայիս), Կուքի, Շահապոնս (այժմ՝ Շահբուղ) գյուղերը, Կարմիր եկեղեցին[32], Օձովավանքը և այլն: Ճահուկ գավառը զարգացած միջնադարում վերածվեց երկու գավառի, որոնցից առաջինը պահպանեց իր անվանումը, իսկ մյուսը ստացավ Շահապոնք անունը: Ելնելով անվանումից, տրամաբանական է կարծել, որ Շահապոնից գավառի տարածքը՝ դեռ մինչև վերջինիս որպես առանձին գավառ ձևավորվելը, որպես ձեռական իշխանության երկիր, հանձնվել է արքունի շահապին, որի պաշտոնի անվանումն էլ փոխանցվել է գավառին: Ուշ միջնադարում անունս հնչյունափոխվելով և ապավաղվելով, վերածվել է Շահբուղի: Վարչական առումով, համեմատած Երնջակի հետ, Ճահուկն ավելի է բավարարում գավառ ձևավորելու պայմաններին, չնայած ոչ լիակատարության հանգամանքն այստեղ էլ առկա է: Թե ինչ տարածքներ կարող էին դրա կազմի մեջ լինել սկզբնապես, որևէ աղբյուր չի հայտնում: Եթե Երնջակի կապակցությամբ սյունյաց պատմիչն այն հիշում է Գողթնի հետ, որը, թեկուզև անորոշ, հավաստում է նրանց երբեմնի միասնության մասին, ապա Ճահուկի առնչությամբ նա լռում է: Ճիշտ է, կա մի իրողություն, որը բացահայտում է պատմությունը, սակայն դրան կանդրադառնանք մի փոքր ուշ:

Վայոց ձոր գավառը, որ Սյունիքի գավառների ցանկում երրորդն է, անտարակույս պատկանում է երկրամասի ամենանշանավոր, հուշարձաններով հեղեղված գավառների թվին: Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակի ուսումնասիրությունը պարզում է, որ այն իր մեջ է ներառել Արփա գետի ավազանը վերին և միջին հոսանքի շրջանում և չնչին տարբե-

31 Նույն տեղում:
32 Նույն տեղում, էջ 522:

րությամբ, համապատասխանել է Հայաստանի Հանրապետության Վայքի մարզի տարածքին: Դրա մեջ են մտել՝ բացի Վայքի մարզի տարածքից, հին վերին և ներքին Տանձիկ (ներկայումս՝ Դանղիկ Աշաղա և Յուխարի), Ծավաձոր (ներկայումս՝ Ջաղաղուր), Հողոցիմ (ներկայումս՝ Յայջի) և մի քանի այլ գյուղեր, որոնք մեր օրերում մտնում են Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մեջ: Ըստ Սա. Օրբելյանի, Սյունյաց Ստեփաննոս մետրոպոլիտը, քարոզելով, գալիս է բարելից Եղեգյաց ձորի Մողան ավանը և փորձում է խելքի բերել անբարոյականության ախտով բռնված մի կնոջ, որիս մինչ այդ նա երեք անգամ զգուշացրել էր տիրոջ անունով: Այս անգամ նա որոշում է նրան մեծապես պատժել: Սաստիկ շոգի պատճառով գնում է Ավագ ակն կոչված քաղցրահամ աղբյուրի ակունքում զովանալու: Այստեղ նա երկար աղոթելուց հետո ննջում է, իսկ հիշյալ անպատկառ կինը, իր հետ վերցնելով սիրեկանին, գալիս է նրան սպանելու: Հրահրելով սիրեկանին սպանել Ստեփաննոսին և սեսնելով, որ նա այդ չի կարողանում անել, անբարոյական կինն ինքն է սպանում սուրբին՝ սուրը խրելով նրա փորը: Ստեփաննոսի սպասավորները՝ առավոտյան իմանալով այդ մասին, նրա դիակը Արկաղն գյուղի բնակիչների խնդրանքով հողին են հանձնում՝ քաջ զորավար սուրբ Քրիստափորի պատվին կառուցված սենյակում: Սակայն շուտով վրա է հասնում ասսվածային պատիժը: Թանձր իավարը սաստիկ երկրաշարժի և հավանաբար նաև Սարկողովք լեռան (այժմ՝ Վայոց սար) հրաբխի պատճառով քառասուն օր պատում է գավառը: Տապալվում են լեռները, քանդվում պալատներն ու տները, տարը հազար մարդ ողջ-ողջ թաղվում է փլատակների տակ, իսկ «...ձայն մարդեղեն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յօդոց «վա՜յ ձոր, վա՜յ ձոր». ...յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր»[33]: Երկրաշարժը տեղի է ունեցել հայոց թվականության 184 թվի հրոտից ամսի 15-ին կամ 735 թ. հուլիսի 21-ին[34], սակայն գավառը Վայոց ձոր անունով հայտնի է դրանից շատ առաջ: Եղիշեի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու հավաստմամբ, Վայոց ձորի Հողոցիմ կամ Հողոցմանց գյուղից է եղել 450–451 թթ. Վարդանանց պատերազմի ակտիվ մասնակիցներից մեկը՝ կաթողիկոս կամ կաթողիկոսության տեղապահ Հովսեփ Վայոցձորեցին[35], հետևաբար գավառանունը ոչ մի կերպ չի կարող կապվել 735 թ. երկրաշարժի հետ: Գավառանունն, ամենայն հավանականությամբ, ցեղային ծագում ունի և ծագումնաբանորեն աղերս ունի Վայկունիք տեղանվան հետ, որի հիմքում ևս ընկած է «վայ» ցեղանունը: Զարգացած միջնադարում գավառը հայտնի էր նաև Եղեգյաց ձոր, իսկ ուշ միջնադարում և ավելի ուշ՝ Դարալագյազ անվանմամբ, որոնցից երկրորդը չնայած արտահայտված այլևայլ կարծիքներին, հայկական «Եղեգեաց ձոր»-ի հնչյունափոխված ձևն է, որտեղ «Դարա»-ն թարգմանությունն է հայերեն «ձոր» բառի, իսկ «ալագյազ»-ը հնչյունափոխության ենթարկ-

---

33 Նույն տեղում, էջ 138-143:

34 Նույն տեղում, էջ 143:

35 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 178: Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 358: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 38:

ված «Եղեգեաց»-ն է[36]:

Վայոց ձորում են դանվել ինչպես վերը հիշված Հողոցիմ, Մոգն կամ Մոդան և մի քանի այլ բնակավայրերը, այլև Եղեգիս դյուղաքաղաքը, Փոդահանդ արծաթահանքի բնակավայրը, հռչակավոր Հրաշկաբերդը կամ Հրասեկարերդը, Կապուչա բերդը, Սուլեմա բերդը, Նորավանքը կամ Խորանձոր անապատը, որը դարձավ Սյունիքի հոգևոր կենտրոն, Ցախաց քար վանքը, Թանահատը կամ Թանահատի վանքը, Գնդեվանքը, Խոտակերից կամ Վարկոսի վանքը, Հերմոնավանքը, Արատեսի վանքը, Գլաձորի համալսարանը, Ջերմուկ բնակավայրն իր աշխարհահռչակ հանքային ջրով և այլն և այլն[37]:

Դատելով ըստ ամենայնի հնագույն ժամանակներում Վայոց ձորի մեջ պետք է մաներ նաև Շարուրի դաշտը, որին, սակայն, կանդրադառնանք ավելի ուշ.

Սյունիքի նշանավոր գավառներից էր Գեղաքունին, որը ժողովրդական կեղծ ստուգաբանության հետևանքով ձեռք էր բերել «Գեղարքունի» արտասանությունը: Այն զբաղեցնում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արևմտյան հատվածը, որը մինչև վերջերս հայտնի էր որպես Կամոյի և Մարտունու շրջաններ: Գեղաքունիքի մեջ պետք է մաներ նաև Սևանա լճի հյուսիսային առափնյա շրջանի մեծ մասը, ինչպես կարելի է եզրակացնել Կլավդիոս Պտղոմեոսի որոշ տեղեկություններից: Համաձայն վերջինիս «Աշխարհագրության» տվյալների, Պարյուադրես լեռան մոտ գտնվել են Սիրակենե և Սակապենե գորավարությունները կամ աշխարհները[38]: *Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրողները, որպես կանոն, փորձում են Սիրակենեն սրբագրել Սիրակենե և նույնացնել Շիրակի հետ, իսկ Սակապենեն սրբագրել Սակասենե և նույնացնել Շակաշենի հետ, որով հիշյալ երկուսի սահմանակցությունը բացատրվում է, հակասելով սկզբնաղբյուրի տեղեկությանը, ստորև ցույց կտրվի, որ ճիշտ է միայն Շակաշեն-Սակապենե նույնացումը, իսկ Սիրակենեն նույնանում է Սյունիքին, որով Պարյուադրես լեռները համապատասխանում են Արեգունի և Սևանա լեռնաշղթաներին:*

«Աշխարհացույց»-ը Գեղաքունի գավառը հիշատակում է Գեղարքունյաց կամ Գեղամա ծովի հետ միասին[39], *որը որոշ մտորումների տեղիք է տալիս: Կարելի է ենթադրել, որ սկզբում Գեղաքունիք գավառն ընդգրկել է Սևանա լճի ողջ ավազանը և այդ պատճառով էլ Սևանա լիճը կամ Գեղաքունյաց ծովը հիշատակվում է սրա կազմում: Եթե այս հարցադրումը ճիշտ է, ապա մնում է ենթադրել, որ Սոթքի որպես գավառի ձևավորումը կատարվել է ավելի ուշ, ուստի Սևանա լիճը կապվում է ոչ թե Գեղաքունիքի ու Սոթքի հետ, այլ միայն Գեղաքունիքի: Սակայն հնարավոր է մեկ*

---

36 Ռ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. «Վայոց ձոր» տեղանվան ստուգաբանության հարցի շուրջը.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, N 9, էջ 85–96:

37 Գ. Ի ն ճ ի ճ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 255–263:

38 Claudii Ptolemaei Geographia, E codicibis recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, Voluminis Primi, Pars secunda, Parisiis, MDCCCCI (1901), p. 938.

39 ԱՄԽ, էջ 33. «...ղ Գեղարքունի հոմանուն ծովովն, ...»: К. П. П а т к а н о в. *Նշվ. աշխ., էջ 19, («...Գեղարքունի և ծովն, ...»):*

այլ բացատրություն կա, որը մեր կարծիքով, ավելի մոտ է իրականությանը: Հայտնի է, որ Պտղոմեոսի երկում Արցախ աշխարհը հանդես է գալիս Սոդուկենե, այսինքն՝ Ծավդեք անունով[40]: Ուսումնասիրողների մոտ ոչ մի կասկած չի հարուցում այն իրողությունը, որ Սոթք գավառի և Սոթք բնակավայրի անունները ծագում են հենց Ծավդեք անվանումից[41], հետևաբար տեղին է ենթադրել, որ Սոթք գավառի տարածքը Պտղոմեոսի ժամանակներում չէր մտնում Սյունիքի մեջ, այլ մաս էր կազմում Սոդուկենե-Ծավդեքի, որի հետևանքով Գեղաքունյաց ծովը հիմնականում համարվելով Սյունիքի տարածք, հիշատակվում է Գեղարքունյաց գավառի հետ:

Գեղաքունի տեղանունը, ինչպես վկայում են Վանի բևեռագիր արձանագրությունները, գոյություն ուներ դեռ մինչև Սևանա լճի ավազանի նվաճվելը Վանի թագավորների կողմից : Սևանա լճի արևմտյան առափնյա շրջանը արձանագրություններում կոչվում են Uelikuni կամ Uelikuhi երկիր, որը մի քանի անգամ ենթարկվում է Վանի թագավորներ Սարդուր II-ի և Ռուսա I-ի ավերիչ արշավանքներին: Եթե ի նկատի ունենանք, որ հայերենի օրինաչափություններով "V"-ն կարող էր վերածվել "G"-ի, ապա անկասկած է, որ Velikuni-ն կարող էր վերածվել Գեղաքունիի[42]: Թերևս ցեղային շրջանի ինչ-ինչ իրադարձություններ առասպելախառն պատմությունների ձևով արտացոլվել են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում: Պատմահոր հաղորդման համաձայն, Հայկի սերնդից Գեղամը «...թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որդւովք բնակել, և ինքն դնաց զմիւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեղր ծովակի միոյ: Շինէ զեղր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովն»[43]: Այս վերին աստիճանի հետաքրքիր հաղորդումը, որ վերաբերում է Հայկյանների Հայկական լեռնաշխարհում տարածվելու պատմությանը, առանձին քննության խնդիր է, սակայն մի բան հստակ կարելի է ասել, որ այն վերաբերում է մինչվանյան ժամանակներին: Հայկական սկզբնաղբյուրներում երբեմն հավասարություն է դրվում Գեղամա երկրի և Գեղաքունիքի միջև: Այսպես, Վարդան Արևելցու խոսքերով «Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս, եւ Սեւան կղզին ի մէջ ծովուն»[44]: Դժվար է ասել, սա հին իրողության արտահայտություն է, թե աշխարհագրագետի ժամանակների կացություն, այնուամենայնիվ, տվյալ հաղորդման համաձայն Սոթքը մաս է կազմում Գեղաքունիքի, որի կազմում հիշատակվում է Մաքենիսի ուխտը: Զմտնե-

---

40 Claudii Ptolemaei Geographia, էջ 938:

41 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 80: Սակայն Ս. Երեմյանը սխալվում է, կարծելով, թե Սոթք (Սաւգք) կամ Սոգք գավառը կոչվել է նաև Զաւ[գ]է[ք]: Վերջին անունը նա փորձում է դուրս բերել Զաւէ գավառանունից, որն իրականում Ծավդեքի հետ ոչ մի կապ չունի և աղավաղումն է Ուտիքի Աղուէ գավառանվան:

42 Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, №241 F, 242 DI+DII, 388, 389: Տե՛ս նաև Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинописные надписи. М., 1960, 1960, №155 F, 156 DI+DII, 265: Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նոր Բայազետի սեպագիր արձանագրությունը. Երևան, 1930, էջ 1-34: Г р. К а п а н ц я н. Историко-лингвистическое значение топонимики древней Армении. Ереван, 1940, с. 28: Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 199-200:

43 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Գ, Ա, գլ. ԺԲ:

44 Աշխարհացույց Վարդանայ վարդապետի. Բարիզ, 1960, էջ 12:

լով այլ մանրամասների մեջ, հիշենք, որ Գեղաքունիք գավառում էին գտնվում Գեղաքունվո կամ Գեղարքունո բերդը, Հայրիվանքը, Շողագա կամ Շողուագա վանքը, Երերոն գյուղը, Գառնակեր շենը, Կոթ ավանը կամ գյուղաքաղաքը, Գավառ կամ Գավառնի քաղաքագյուղը, Ալբերգը, Նորատուսը և այլն[15]: Չնայած սկզբնաղբյուրների այն հիշատակություններին, թե Սևանա կղզին և վանքը գտնվել են Գեղաքունիքի մեջ, ամենայն հավանականությամբ, դրանք սկզբնապես գտնվել են Այրարատի տարածքում և միայն ավելի ուշ սյունյաց իշխաններին հաջողվել է Սևանա լճի հյուսիսարևմտյան առափնյա շրջանը միացնել իրենց տիրույթներին: Սևանա կղզին և դրանից արևմուտք գտնվող առափնյա շրջանը տեսականորեն կարող էր մտնել Այրարատի Վարաժնունիք կամ Մազազ գավառների մեջ, սակայն, հաշվի առնելով բնական սահմանի խնդիրը, որպիսին կարող էր ծառայել Հրազդան գետը հիշյալ երկու գավառների համար, դրեթե տարակույս չկա, որ կղզին և առափնյա արևմտյան շրջանները մտել են Վարաժնունիքի մեջ, որով անցել է Կուրի ավազանից դեպի Արտաշատ մայրաքաղաք ձգվող մայրուղին:

Սևանա լճի ավազանի արևելյան մասում գտնվում էր Սոթք կամ Սոտք գավառը՝ համապատասխանելով նախկին Վարդենիսի շրջանի տարածքին: Ինչպես վերն արդեն նշել ենք, ըստ Ստ. Օրբելյանի մեկնարանության. «Զորրորդ՝ Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոյ և գառնաշունչ սղոցն կոչեցաւ Սոթք»: Ճիշտ է այդ, թե ոչ, դժվար է ասել, բայց իրողություն է, որ այսպես քամիները հաճախ են փչում և ձմեռները ցրտաշունչ են: Սակայն մեծ հայագետ Հ. Հյուբշմանը դրան համաձայն չէ և գտնում է, որ «սոթ» միայն նշանակում է «պինդ, կուռ, կարծր, խիստ», իսկ «սոտ» կամ «սոդ» ձևով բառ չկա[16]: Սոթքում էին գտնվում նշանավոր Մաքենուց կամ Մաքենացվոց վանքը, Վասակաշեն բնակավայրը, Աստվածածին եկեղեցին, Վանեվանը և այլն:

Դեռևս Հ. Հյուբշմանը փորձել էր գավառանունը կապել Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշատակված Σοδουκηνή սարատեղիայի անվանման հետ[17]: Մոտավորապես նույն տեսակետին էր Ն. Ադոնցը, ըստ որի Սոթք գավառն իր անվամբ պարտական է sodi կամ «Ծաւդէացի» կոչվող ցեղին և համապատասխանում է Պտղոմեոսի հիշատակած Սոդուկենեին[18]: Ս.Տ. Երեմյանի կարծիքով, Սոդքը կամ Սաւդքը Արշակունիների թագավորության շրջանում կազմում էր առանձին վարչական միավորի «Ծաւդէայեաց իշխանութեան» կենտրոնը համանուն Սաւդք աւանով (այժմ՝ Զոդ գյուղ), ըստ որում «Ծաւդէայեաց իշխանութեան» մեջ էր մտնում ամբողջ Արցախը[19]:

Ադահեճ գավառը զբաղեցնում էր Ադավնո կամ Հագարու գետի վերին հոսանքի շրջանը՝ համապատասխանելով նախկին Լաչինի և ներկայումս Լ.Ղ.Հ վերահսկության տակ գտնվող Քաշաթաղի շրջաններին: Ինչպես վերը տեսանք՝ Ստ. Օրբելյանը զարգացած միջնադարում Ադահեճքի տարած-

---

15 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 265–277:
16 Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 403:
17 Նույն տեղում, էջ 226:
18 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 424.
19 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 80:

քում արձանագրում է երկու գավառ՝ Քաշաթաղ և Խոժոռաբերդ անուններով: Եթե Աղահեճ գավառանունը ծագումնաբանորեն կարող է կապվել լահիճ ցեղանվան հետ[50], ապա նոր ձևավորված գավառների անունները, անտարակույս, ծագում էին համանուն բերդերից: Նման եզրակացության կարելի է գալ սյունյաց պատմիչի բերած Սյունիքի բերդերի հիշատակությունից, որոնց մեջ հանդիպում են Խոժոռաբերդ և Քաշեթաղուց բերդերը[51].

Գավառացանկի յոթերորդ գավառը, որ Ստ. Օրբելյանը կոչում է «զբուն դահ իշխանացն և հայրապետաց» և իբր իր անունն ստացել է Ծղուկ գավառապետի անունից, Ծղուկն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության նախկին Սիսիանի շրջանին և Գորիսի շրջանի արևմտյան մասին: Ամենայն հավանականությամբ, Ծղուկ ցեղը, որի գոյությունն առավել ևս անտարակուսելի է Սիսիանի շրջանում Վանի բևեռագիր արձանագրության հայտնաբերումից հետո, որում հիշատակվում է «Ծուլուկու» երկիրն իր Իրդուա և Ամուղա կենտրոններով[52]: Ն. Հարությունյանի կարծիքով տեղաբնիկներն իրենց երկրամասը վանյան տիրապետության շրջանում ևս, հավանաբար, կոչել են Ծղուկ, որը, սակայն, վանյան վանկագիր սեպագիրը կարող էր հաղորդել Şu-lu-qu = Ծուլուկու գրությամբ[53]: Սյունիքի և Ծղուկ գավառի կենտրոնն էր Շաղատ գյուղաքաղաքը համանուն բերդով: Շաղատի թաղերից մեկը գտնվում էր «Յեզը ծովակի միջ», այսինքն մի լճակի ափին, որը, սակայն, չի պահպանվել: Շաղատը երբեմն համարվել է ավան, իսկ եկեղեցին համարվում էր «...յայնմ ժամանակի մայր եկեղեցեաց» Սյունիքի: Ինչպես հաղորդում է Ստ. Օրբելյանը, սյունյաց իշխան Անդոկը խիստ նեղվելով պարսից զորքերից, կարգադրում է հավաքել կտակարանները, ոսկե և արծաթե սուրբ խաչերը, սրբերի և նահատակների նշխարները Շաղատի քարկոփ գմբեթավոր եկեղեցում թաքցնելով դրանք տարբեր դարաններում, որից հետո սր. Ստեփաննոսի եկեղեցին ծածկվում է հողով: Միայն քսանհինգ տարի հետո Բաբիկ Սյունին կարողանում է վերադառնալ Սյունիք, տիրանալ իր հայրենի ժառանգությանը և պատահականորեն հայտնաբերել եկեղեցին, որից մի ձայնընկեց հեռավորության վրա գտնվում է Անձնատու կոչվող խոռը[54]: Շաղատը, թերևս, ունեցել է նաև մենաստան: Ծղուկում են գտնվել Տաթևի վանքը, Որոտն գյուղը, բերդը և վանքը, Մեծ անապատը կամ Հարանց անապատը, Թանահատի վանքը և այլ կարևոր կենտրոններ:

Աղահեճքից հարավ և Ծղուկից դեպի արևելք, Աղավնո կամ Հագարու գետի միջին հոսանքի շրջանում գտնվում էր Հաբանդ գավառը, որն իր

---

50 Հ. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 424: Հեղինակը հակված էր կարծելու, որ գավառանունն առաջացել է «լահիճ» ցեղի անունից, որի մի հատվածը բնակվում է Դաղստանից հարավ ընկած շրջանում: Կիսելով Ն. Ադոնցի միտքը մենք գտնում ենք, որ իրենց անվանումները ստացել են հիշյալ ցեղանունից Իրանի Լահիջան անունով երկու երկրամասերը:

51 Ս. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 13:

52 Հ. Բ. Արտյուն յան. Корпус урартских клинообразных надписей, надпись № 411.

53 Հ. Բ. Արտյուն յան. Топонимика Урарту, с. 236. Տե՛ս նաև N. V. Harouthiounian. La nouvelle inscription ourartéenne decouverte en Arinenie Sovietique. Տե՛ս Gesellschaft und Kuitur im alten Vorderasien, Berlin, 1982, S. 83-85.

54 Ստ. Օրբելյան, էջ 34–47:

տարածքով մեծավ մասամբ համապատասխանում էր Հայաստանի Հանրապետության նախկին Գորիսի շրջանի արևելյան և դրանից դեպի արևելք ընկած տարածքներին, որոնք հասնում էին Արցախի լեռների ջրբաժան գիծը Ռիրս և Դիգափայտ լեռնագագաթների շրջանում: Թ. Հակոբյանի կարծիքով Հարանդի սահմանները արևելքից եզերվում էին Հագարի գետով[55], սակայն մեր կարծիքով, գետը կարող էր սահման ծառայել Սյունիքի համար միայն ստորին հոսանքի շրջանում, իսկ Հաբանդի կողմերում, այնուամենայնիվ, առավել հավանական է սահմանն Արցախի լեռների ջրբաժան գծով անցկացնելը: Ամենայն հավանականությամբ այս գավառանունը ևս ցեղային ծագում ուներ և իր զուգահեռն ուներ հունական ցեղերի շրջանում, որոնցից Էվբեա կղզին բնակեցնողները հայտնի էին Հաբանդներ (Ἄβαντοι) անունով[56]: Ավանդական պատմության համաձայն, Զագիկ նահապետը Հաբանդ գավառում կառուցել է մի բերդ և այն անվանել է Հարանդի կամ Զագեաձորի բերդ, իսկ բերդի ձորը նրա անունով կոչվել է Զագեաձոր[57]: Ըստ մեզ՝ Զագիկ նահապետի անունը կարող է աղերս ունենալ Հայաստան ներխուժած Սակ կամ Շակ ցեղի անվանմանը, որն իր անունն էր ավել Ուտիքի Շակաշեն գավառին: Հավանաբար ավելի ուշ Շակը կամ Սակը հնչյունափոխվելով վերածվում է Զագի, իսկ Զագեաձորն էլ՝ Զանգեզուրի ժողովրդի կողմից մեկնաբանվելով որպես «Զանգն իզուր»:

Հայտնի է, որ Հաբանդ անունով գավառ կար նաև Արցախում, որն, ի տարբերություն սյունյաց Հաբանդի, կոչվել է Մյուս Հաբանդ կամ Խարանդ: Միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ հիշյալ երկու գավառները սկզբում կազմել են մեկ միասնական վարչական տարածք և ծնունդ են առել Մեծ Հայքի աշխարհների ձևավորման շրջանում, երբ Սյունիքն Արցախից բաժանող սահմանագիծը հատել է Հաբանդը՝ վերջինիս արևմտյան հատվածը թողնելով Սյունիքին, իսկ արևելյանը՝ Արցախին[58]: Հարանդի կարևոր բնակավայրերից էին Հալիսը, որն ավելի ուշ կոչվել է Հայիձոր, Շնհերը, որ այժմ անվանվում է Շինուհայր, Խոտ և Տեղ գյուղերը: Հատկապես մեծ գյուղ էր Շնհերը, որը Տաթևի վանքին վճարում էր ամենամեծ հարկը՝ 24 գահեկան կամ դրամ[59]:

Հարավային Սյունիքի կարևորագույն Բաղք գավառն իր հիմնական մասով համապատասխանել է Հայաստանի Հանրապետության նախկին Ղափանի շրջանի հյուսիսարևելյան հատվածին, ընդգրկել է նաև մինչև Աղավնո գետը և Երասխի ու Աղավնո գետի ջրկիցն ընկած տարածքները: Հայտնի է, որ լեռնային երկրների մակերևույթը որպես կանոն պարտադրում է վարչական սահմանների անցկացումը բնական սահմաններով՝

---

55 Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն. Սյունիքի թագավորությունը, էջ 155:

56 Г е р о д о т. История, в девяти книгах, перевод и примечания Г. А. Стратановского. Л., 1972, I, 146.

57 Ս ա. Օ р р е լ յ а ն, էջ 13. «...Հանրագայ բերդ որ ի նոյն տոհմէ Սիսակայ ի Զաղայ նահապետէ շինեալ ի վերայ գետոյ միոյ՝ կոչէ յիւր անուն զձորն Զագէձոր և զբերդն՝ Զագէձորոյ բերդ»:

58 Արցախի Հաբանդ կամ Մյուս Հաբանդ գավառն առաջին անգամ հիշատակում է Փավստոս Բուզանդը (տե՛ս Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, դպր. Գ, գլ. Զ.) «...ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեղն՝ որ անուանեալ կոչի Ամարաղ»: Տե՛ս նաև Մ. Խ о р е н а ց ի. գ. Ե, գլ. Գ:

59 Ս ա. Օ р р е լ յ а ն, էջ 517:

լեռնաշղթաների ջրբաժան գծերով և քիչ թե շատ նշանակալից գետերով: Այն հանգամանքը, որ ռուսական ցարիզմը Զանգեզուրի գավառի հարավարևելյան սահմանն անցկացրել էր Հագարի գետով, իսկ հյուսիսարևելյանը՝ Արցախի լեռների ջրբաժանով[59], անուղղակիորեն հավաստում է նման սահմանների հնարավորությունը և գերհավանականությունը հելլենիզմի գարաշրջանում ու վաղ միջնադարում: Բաղք տեղանունը նույնպես ունի ցեղային ծագում: Բաղերն իրենց հետքերն են թողել պատմական Հայաստանի մի շարք տեղանուններում: Միայն թե, եթե Ն. Ադոնցը սրանց ծագումը բխեցնում էր Բաղասճիք ցեղանունից նրանց տեղաշարժը ցույց տալով հյուսիսից հարավ-արևմուտք, ապա Գր. Ղափանցյանի կարծիքով նրանք շարժվել էին արևմուտքից դեպի արևելք[61]: Զմտնելով այս իրարամերժ կարծիքների մեջ, որը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից, նշենք միայն, որ Սյունիքի հարցում, ելնելով Բաղասճիք ցեղի տեղադրությունից, Բաղասական կամ Դաշտ-ի-Բաղասական երկրամասի գոյությունից և նրանց Սյունիքից դեպի արևելք գտնվելու հանգամանքից, թերևս ճիշտ է Ն. Ադոնցը: Ինչպես կարելի է եզրակացնել Սա. Օրբելյանի վերը բերված հաղորդումից, զարգացած ավատատիրության շրջանում գավառի հյուսիսարևմտյան մասը հայտնի էր Աճեն, իսկ հարավարևմտյանը՝ Քաշունիք անունով: Նման տեղորոշումը պայմանավորված է Նակորզանի՝ գավառի ծայր հարավարևելյան շրջանում տեղադրությամբ: Եթե Աճենը շարունակում էր նաև Բաղք կոչվել, ապա Քաշունիքը հայտնի էր Մյուս Բաղք անունով: IX դ. սկսած Բաղքը դառնում է սյունյաց իշխանական տան ճյուղերից մեկի՝ Զագիկյանների երկիրը:

Ստ. Օրբելյանը, որը «Բաղ» բաղադրիչ ունեցող տեղանունների ծագումը կապում է Սիսակի զարմից Բաղակի անվան հետ, վերջինիս կողմից հիմնադրված է համարում Բազակու քար ամրոցը, որը նա՝ ավելի անառիկացնելով, կոչում է Բաղաբերդ[62]: Ղ. Ինճիճյանը Բաղարերդը տեղադրել է Բաղքում[63], իսկ Թ. Հակոբյանը՝ Զորքում[64]: Ըստ երևույթին, ճիշտ է Թ. Հակոբյանը, որը նման եզրակացության է հանգել Տաթևի վանքին տրվող Պտղի ցուցակի այն տվյալից, որ Ողջի գետի վերնագավառը անվանված է Բաղաբերդու գավառ[65]: Այսուհանդերձ այս գավառը նույնպես նշանավոր էր իր բազմաթիվ ամրոցներով ու բերդերով, վանքերով, որոնցից արժե հիշատակել Անդոկաբերդը, Բարկուշատի բերդը, Պահու, Կկվաքար և Բղենո բերդերը, Բակուրի, Կավարտի, Աչաղուի վանքերը, Երիցավանքը, Վարդանավանքը և այլն:

Սյունիքի Զորք գավառը երկրամասի տարածքով ամենաիրոքր գավառն էր, որը զբաղեցնում էր Ողջի գետի վերին հոսանքի և դրա վտակ Գեղիի

---

60 Տե՛ս ռուսական 5 և 10-վերստանոց քարտեզների համապատասխան պլանշետները:

61 Н. А д о н ц. Նշվ. աշխ. էջ 423: Г. А. К а п а н ц я н. Նշվ. աշխ.: Տե՛ս Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, с. 126—128.

62 Ս տ. Օ р բ ե լ յ а ն, էջ 13:

63 Ղ. Ի ն ճ ի ճ յ а ն. Նշվ. աշխ., էջ 282: Տե՛ս նաև Ղ. Ա լ ի շ а ն. Սիսական, քարտեզը:

64 Թ. Հ а կ о բ յ а ն. Սյունիքի թագավորությունը, էջ 112-118:

65 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, 1942, հավելված, էջ 41: Ս տ. Օ р բ ե լ յ а ն, էջ 12:

ավագանները: Գավառի սահմանները հյուսիսում, արևմուտքում և հարավում անցնում են շրջապատող լեռների ջրբաժան գծերով: Անորոշ է ինչ-որ չափով արևելյան սահմանը, որը պետք է անցներ Աչաղու գյուղի և Բաղաբերդ ամրոցի միջև ընկած տարածքով: Աչաղուն գտնվել է Բաղքում, իսկ Բաղաբերդը, ինչպես վերը տեսանք, Զորքում, ուստի Թ. Հակոբյանը ուսումնասիրելով տեղանքը, եկել է այն համոզման, որ սահմանն անցել է Աչաղու գյուղից շուրջ 1–1,5 կմ արևմուտք գտնվող և տեղացիների կողմից Սուրուն կապ կոչվող ուղղաձիգ ժայռով[66], որից արևմուտք գրեթե նույնքան հեռավորության վրա, գտնվում են Բաղաբերդի ավերակները: Զորքը զարգացած ավատատիրության շրջանում առավելապես հայտնի էր Կապան անունով[67], որն աստիճանաբար տարածվում է նաև Բաղքի և նրան հարևան գավառների վրա: Շատ հնարավոր է, որ Զորքը որպես ինքնուրույն գավառ ձևավորվել է ավելի ուշ, իսկ դրա շարժառիթների մասին միայն կարելի է կռահումներ կատարել: Չի բացառվում, որ այն սկզբնապես պարզապես մտել է Բաղքի մեջ և միայն հետագայում սյունյաց իշխանների կողմից առանձնացվել է որպես ոստան գավառ: Այսպես թե այնպես այն, ըստ երևույթին, դոնե III դ. երկրորդ կեսին գոյություն ուներ և Պատմահայրը գավառն արձանագրել է «Աշխարհացույց»-ում հենվելով III դ. աշխարհագրերի տվյալների վրա: Զորքի կարևոր բնակավայրերից էին Կապանը, որ զարգացած միջնադարում վերածվեց քաղաքի, Բաղաբերդ անառիկ ամրոցը, Բաղակու քար ամրոցը[68] և վանքը, Վահանավանքը, Գեղին և այլն:

Սյունիքի ծայր հարավային գավառներն էին Արևիքը և Կոսականը կամ Կոփսականը: Դրանցից առաջինն ամբողջությամբ համապատասխանել է Հայաստանի Հանրապետության նախկին Մեղրիի շրջանին և, ինչպես հավաստում է Սա. Օրբելյանը, զարգացած ավատատիրության շրջանում բաժանվելով, ծնունդ է տվել Դաշտոն և Մեղրի գավառներին: Գավառն աչքի էր ընկնում իր չոր մերձարևադարձային կլիմայով, երեք կողմերից եզերված էր Սյունյաց լեռներով և նրա արևելյան լեռնաբազուկներով, իսկ հարավում դուրս էր գալիս Երասխ գետի ավը, որը միաժամանակ աշխարհի սահմանն էր: Ժամանակին Ղ. Ալիշանն այն կարծիքն էր հայտնել, որ Արևիքը ավելի վաղ Գողթնի մաս է կազմել, իսկ հետագայում անջատվել է Գողթնից և միացվել Սյունիքին որպես ինքնուրույն գավառ[69]: Այս տեսակետը, որ հավանության է արժանացել Թ. Հակոբյանի կողմից[70], մենք կիսում ենք, սակայն ինչպես ստորև ցույց կտրվի, դրա առաջացումը մի փոքր այլ բացատրություն ունի: Գավառանունը Թովմա Կիլիկեցու մոտ պահպանվել է բացահայտ աղավաղված Արևելիք գրությամբ[71]: Գավառի կարևոր բնակավայրերից, բերդերից ու վանքերից էին Մեղրին, Կարճավան տվանը, Կաքավաբերդը կամ Կքեբերդը, Արկավանքը, Զվարի, Խոլա, Կար-

66 Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Սյունիքի թագավորությունը, էջ 107:
67 Ս ա. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 12:
68 Զնայած Սա. Օրբելյանը Սյունիքի բերդերը թվարկելիս նույնացնում է Բաղաբերդն ու Բաղակու քարը, այլ հիշատակություններում դրանք հանդես են գալիս իբրև տարբեր բերդեր, էջ 335:
69 Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական, էջ 298:
70 Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Սյունիքի թագավորությունը, էջ 101–102:
71 Ղ. Ի ն ճ ի ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 295:

ճավանի, Մեղրու, Որդիշո, Լհե և Լուսկե վանքերը:

Վերջին Կովսական գավառը հայտնի նաև Գուրհամ կամ Գրհամ անունով, տարածքային առումով համապատասխանում էր Հայաստանի Հանրապետության նախկին Ղափանի շրջանի հարավարևելյան հատվածին և դրանից մինչև Բաղք ընկած տարածքներին, որոնք վերահսկվում են ԼՂՀ կողմից: Ինչպես իրավացիորեն նշում է Թ. Հակոբյանը, Կովսականը Սյունիքի համեմատաբար անծանոթ գավառներից է: Ստ. Օրբելյանի աշխատության մեջ պահպանված Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակի ուսումնասիրությամբ, որը կատարել են Ղ. Ալիշանը, Ս. Երեմյանը, Թ. Հակոբյանը և ուրիշներ, մոտավորապես պարզվում է Կովսականին պատկանող տարածքը, որն ընդգրկել է Ծավ կամ Բասուտ կոչված գետի և Ողջիի աջափնյա Բեխ, Վաչագան, Գեղանուշ և մի քանի այլ վտակների ավազանները եզերվելով արևմուտքում Բասուտի արևմտյան ջրբաժանով, Խուստուփ լեռնաճյուղով, հարավում՝ Սյունիքի սահման կազմող Երասխ գետով, արևելքում՝ Ողջի (ստորին հոսանքում՝ Զավնգուր) գետով[72]: Կովսականի բնակավայրերի մեծագույն մասն այսօր հնարավոր չէ տեղագրել այն պարզ պատճառով, որ գրա տարածքում ուշ միջնադարում հաստատված մահմեդական բնակչության ավերիչ գործունեության պատճառով մեծ մասամբ հիշատակներ չեն պահպանվել: Հայտնի է Բեխ գյուղի տեղը, Թ. Հակոբյանը, կարծում ենք, ճիշտ է տեղագրել Գրհամ ամրոցը, Շիկահողքը մինչև այսօր պահպանել է իր անունը, Բարգութաղքը թերևս ներկայիս Բարթազն է, սակայն հարկատու 53 գյուղերի մեծ մասը մեր ձեռքի տակ եղած նյութերով անհնար է տեղորոշել: Հարկատու գյուղերի ցուցակից դատելով, Կովսականում եղել են մի շարք վանքեր՝ Փառվարտո վանքը, Գագավանքը, Պողոսի վանքը և Վարոսի վանքը: Ըստ երևույթին հեթանոսական սրբատեղի է եղել Դից մայրի գյուղը: Ցուցակը ոչնչով չի օգնում պարզելու գավառի բերդերի անունները, որում տեղ չի գտել անգամ Գրհամը: Թերևս Գրհամին կարելի է ավելացնել նաև Գիլաբերդը[73]:

Աշխարհացույցյան Սյունիքը, ինչպես տեսանք, հանդես է դալիս 12 գավառով, որոնց մի մասը սկզբնապես գոյություն չի ունեցել և արդյունք է պատմական, մասնավորապես ավատատիրական հարաբերությունների զարգացման: Սրանց հանդես գալը և զարգացումը ամբողջությամբ կապվում են Սյունիք աշխարհի ձևավորման պատմության հետ, ուստի մենք, նախքան դրան անդրադառնալը, ստիպված ենք խորությամբ քննելու Սյունիք աշխարհի վարչական ձևավորման ու զարգացման պատմությունը: Պատմահայր Մովսես Խորենացին Սյունիք անունը կապում է ավանդական Սիսակի հետ, որը Հայկի սերնդից էր, Գեղամի որդին. «Աստ (Գեղաքունիքում – Հ.Բ.) ծնաւ (Գեղամը – Հ.Բ) զորգի իւր զՍիսակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկաղեղն: Սմա զմեծ մասն ընչից իւրոց տուեալ և ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արևելս մինչև ցդաշտ մի, ուր գետն Երասխ

72 Ղ. Ալիշանը սահմանն անցկացնում է Բասուտ և Ողջի գետերի ջրբաժան լեռների կատարներով (Սիսական, էջ 286), սակայն ճիշտ է Թ. Հակոբյանը, որը հիմնավոր ձևով սահմանն անցկացնում է Ողջի գետով (Սյունիքի թագավորությունը, էջ 104-105):

73 Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Սյունիքի թագավորությունը, էջ 76.

հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս և նեղս, ահագին դնդնչմամբ իջանէ ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ լնու շինութեամբ դսահման բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յըստակագոյնս ևս Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի Պարթևաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ. և զայս առնէ Վաղարշակ՝ ի պատմութենէն ստուգեալ»[74]: Անշուշտ, խիստ համարձակ է սույնատիպ հաղորդումների հիման վրա հեռուն գնացող եզրակացությունների հանգելը, սակայն մենք, այնուամենայնիվ, հակված ենք կարծելու, որ այս հաղորդման մեջ պատմական արձագանքներ են պահպանվել այն հեռավոր ժամանակների մասին, երբ Գեղամա (Սևանա) լճի ավազանը վարչական առանձին շրջան է կազմել և չի մտել Սյունիքի մեջ: Եվ իրոք, Սևանա լճի ավազանը կազմում է ուրույն բնաշխարհագրական շրջան, որը լոկ դժվարանցանելի Սուլեմա լեռնանցքով կապվում է Վայոց ձորի և Սյունիքի մնացած գավառների հետ: Քաղաքական և տնտեսական կապերի տեսակետից այն ավելի առնչվում է Այրարատին և բնավ պատահական չէ, որ Սյունիքի նվաճումն ու տնտեսական յուրացումը Վանի թագավորների կողմից կատարվեց Այրարատից Գեղամա լճի ավազան–Վայոց ձոր–Ծղուկ ուղղությամբ: Չնայած Սևանա լճի ավազանից հարավ ընկած Սյունիքը Պատմահոր երկում հանդես է գալիս որպես մի ամբողջություն, այնուամենայնիվ, նույն հաղորդումից կարելի է եզրակացնել, որ հիշյալ ամբողջությունն ավելի էթնիկ էր, գուցե և ցեղային, քան վարչական, որովհետև ավանդական համարվող և որպես կանոն Տրդատ I-ի կամ Վաղարշ II-ի հետ նույնացվող Վաղարշակ թագավորը, որը ոչ միայն նախորդ մի շարք հեղինակների, այլև մեր քննության արդյունքներով, իրական անձավորություն է, Սյունիքի տարածքի վերակացությունը հանձնում է մի քանի հոգու. «... գտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ»: Սյունիքի տարածքում մի քանի վարչական միավորների գոյությունը, կարծում ենք, անմիջականորեն առնչվում է Պլինիոս Ավագի այն տեղեկությանը, որ Մեծ Հայքը բաժանված է եղել 120 ստրատեգիաների կամ զորավարությունների, որոնք բարբարոսական անուններ ունեին[75]: Առաջին եզրակացությունը, որ կարելի է կատարել մ.թ.ա. I դ. գոնե 40-ական թվականներին Սյունիքը որպես աշխարհ չէր ձևավորվել: Դատելով «Աշխարհացույց»-ի տվյալներից՝ առանց հաշվի առնելու նրանում հետագայում տեղ գտած փոփոխությունները, Մեծ Հայքն ունեցել է 183 գավառ[76], որին եթե գումարենք անդամ Ուտիք Առանձնակը[77], որի գոյությունը I դ բացառվում է և որի ձևավորման որոշակի ժամանակը մեզ հայտնի չէ, կությունը չի փոխվում, որովհետև քանակն այդ դեպքում դառնում է 184: Ստացվում է, որ Պլինիոս Ավագի ժամանակների համեմատությամբ գավառները՝ տրոհվելով, ավելացել էին 64-ով: Հասկանալի է, որ գավառ-

74 Մ. Խ ո ր ե ն ա ց ի. գ. Ա, գլ. ԺԲ:

75 P l i n i i S e c u n d i C. Naturalis historiae. Cambridge, Mass.–London, 1950-1962, VI, 10, 2.

76 ԱՄԽ, էջ 29-35: Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 350:

77 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 350:

ների այդօրինակ աճի պայմաններում սկզբնապես Սյունիքի տարածքում գավառների քանակությունը պետք է 12-ից պակաս լիներ: Նախքան գավառների նախնական քանակությունը քննարկելը, որը հնարավոր է աշխարհի ձևավորման բոլոր խնդիրները ուսումնասիրելուց հետո, անդրադառնանք կրկին երկրամասի ձևավորման պատմությանը:

Պատասխան տանք այն հարցին, թե Ստրաբոնի հիշատակած Փավենե, Փավնիենե կամ Փավնիտիս (Φαυηνή, Φαυνηνή, Φαυνιτις) երկրամասը, որը հայոց Արտաշես I (189-160 թթ. մ.թ.ա.) թագավորը գրավել էր մարերից[78], այս կամ այն չափով առնչվում է Սյունիքին, թե՞ ոչ: Գերմանացի նշանավոր հայագետ Յ. Մարքվարտը փորձել է այն նույնացնել Ապահունիք գավառի հետ (հուն. Ἀπαχουνή), սակայն Հ. Հյուբշմանն իրավացիորեն ցույց է տվել, որ հայերենի բառասկզբի «ապա»-ն չի համապատասխանում հունարեն φα-ին, և այն կարծիքն է հայտնել, որ Φαυνιτις-ը հարկ է սրբագրել Ζυνιτις կամ Ζουνῖτις և այս նոր անվան մեջ Սյունիք նահանգը տեսնել: Որոշ վերապահությամբ այս տեսակետն ընդունել է նաև Հր. Աճառյանը, իսկ Թ. Հակոբյանը ելնելով նման իրողության հնարավորությունից, ենթադրել է, որ Ստրաբոնի ժամանակներում Սյունիք և Արցախ նահանգներն, ըստ երևույթին, կազմել են մի աշխարհ, որը կրել է Փավնիտիս անունը[79]: Սակայն, ի պատիվ Հ. Հյուբշմանի, պետք է ասել, որ նա նման սրբագրությունը հնարավոր է համարում այն դեպքում, եթե Սյունիքը Արտաշես I-ի նախնական երկրների շարքում չի եղել[80]: Ստրաբոնի հաղորդած տեղեկության համակողմանի քննությունը մեզ բերում է այն մտքին, որ հիշյալ երկրամասը ոչ մի առնչություն Սյունիքի հետ ունենալ չէր կարող, եթե չհաշվենք սահմանակցությունը Երասխ գետով: Ամասեցի աշխարհագրագետը Փավենեի հետ հիշատակում է նաև երկու մարզ՝ Օրքիստենեն ու Կոմիսենեն, իսկ հիշյալ երեք երկրամասերի տեղադրությունը լույս է սփռում հարցիս վրա: Ստրաբոնը Փավենեն անվերապահորեն համարում է Հայաստանի երկրամաս, իսկ Փավնիտիսը մարերից գրավված երկիր[81]: Մարերից զավթված երկրների թվում հիշատակվում են նաև Կասպիանեն և Բասորոպեդան, որոնցից մեզ հայտնի է միայն առաջինի տեղադրությունը: Կասպիանեն համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի տարածքին, որը հայկական աղբյուրներում հայտնի է Կասպք կամ Կազբք անունով[82]: Ստրաբոնը մարերից Արտաշեսի գրաված երկրները հիշատակում է Կասպիանե-Փավնիտիս-Բասորոպեդա հերթականությամբ, ուստի իմանալով, որ Կասպիանե-Կասպքը տեղադրվում է Կասպից ծովի ափին Փայտակարանի տարածքում, պետք է ենթադրել, որ մյուս երկուսը աշխարհագրական հերթականությամբ տարածվել են Կասպիանե-

---

78 Ս տ ր ա բ ո ն. քաղեկ, թարգմանեց Հ. Աճառյան. Երևան, 1940, էջ 54-57:

79 J. M a r q u a r t. Ēransahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, s. 108. Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն. նշվ. աշխ., էջ 16-17: Ս տ ր ա բ ո ն. էջ 123: Թ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 27:

80 Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն. նշվ. աշխ. էջ 27:

81 S t r a b o. XI, 14, 5. "... ἐκ Μηδων μεν τε Κασπιανὴν καὶ φαυνιτιν καὶ Βασροπεδαν, ..."

82 Փ ա վ ս ա ն ո ս Բ ո ւ զ ա ն դ. Դպր. Դ, գլ. Ծ. «աշխարհն Կաղբից»: Մ. Խ ո ր ե ն ա ց ի. գ. Բ, գլ. ԾԴ. «Կասբից երկիր»:

Կասպից արևմուտք ընկած շրջանում, Մեծ Հայքի հարավարևելյան սահմանագլխին: Ավելին, հիշյալ երկրամասերի տեղադրությունը կարելի է որոշակիացնել՝ նկատելով Մեծ Հայքի թագավորության պետական սահմանագծից՝ մինչև Արաքսես I-ի տարածքային ձեռքբերումները: Արծրունյաց պատմիչի մի շատ արժեքավոր տեղեկությունից, որը նա քաղել է մեզ անհայտ մի հին աղբյուրից, պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի արևելակողմով՝, այսինքն՝ Հեր և Զարևանդ գավառները դեռևս հայոց պետության մեջ չէին մտնում: Եվ քանի որ Կասպ-Փայտակարանի հյուսիսային սահմանն անցնում էր Երասխ և մասամբ Կուր գետով, իսկ Նախճավանն էլ պատկանում էր Մեծ Հայքի թագավորությանը, ապա Հեր և Զարևանդ-Կասպք հատվածում հայոց պետության սահմանն անցել է Կոտոր (Կարմիր), իսկ այնուհետև՝ Երասխ գետերով: Եթե մեր մոտեցումը ճիշտ է, իսկ աղբյուրագիտական նյութը վկայում է դրա օգտին, ապա ստրաբոնյան Փավնիտիսն ու Բասորոպեդան պետք է տարածական առումով համապատասխաններն Մարդպետականին (Արևելյան Վասպուրական) և Պարսկահայքին[84]: Մի կողմ թողնելով Փավնիտիսի բացատրության խնդիրը, որ մենք մասամբ քննության ենք առել մեկ այլ ուսումնասիրության մեջ[85], նշենք, որ Ստրաբոնի մոտ Փավենե-Փավնեն-Փավնիտիսը հանդես է գալիս երկրամասերի մեկ այլ շարքի մեջ, որը նույնպես աշխարհագրական հերթականություն ունի: Հույն աշխարհագրագետը Փավենեի և Օրքիստենեի միջև հիշատակում է Կոմիսենեն (Κομισηνή), որն աշխարհագրական տեսակետից պարզապես նույնանում է Սյունիքին, քանի որ այն գտնվում է Փավնիտիս-Մարդպետականի և Օրքիստենե-Արցախի միջև: Մենք լիովին գիտակցում ենք, որ շատ ուսումնասիրողների համար ոչ միայն անսպասելի, այլև անընդունելի տեղադրություն ենք առաջադրում, սակայն դա մեր կամային ցանկությունը չէ, այլ բխում է Ստրաբոնի երկի տրամաբանությունից, թվարկման հերթականությունից և աշխարհագրական դասավորությունից, որովհետև ինչպես Արաքսենեի դաշտին հաջորդում են Շակաշենն ու Գուգարքը՝ կազմելով Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան սահմանային երկրամասերի անընդհատ շարք, այնպես էլ Փավնենեն, Կոմիսենեն և Օրքիստենեն ներկայացնում են մեկ այլ շարք, որը ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Ստրաբոնը հիշատակում է Կոմիսենե անունով երկու երկրամաս, որոնցից մեկը, ինչպես նշեցինք, Սյունիքն է, իսկ մյուսը գտնվել է Պարսկաստանում[86] և համապատասխանել է «Աշխարհացույց»-ում հիշված Կոշմ կամ Կոմշ աշխարհին, որը մտնում է Երանշահրի Խորասանի կամ Արևելյան քուստակի մեջ[87]: Մենք հակված ենք կարծելու,

---

83 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, Պատմութիւն տանն Արծրունեաց. Երևան, 1985, էջ 84:

84 Տե՛ս մանրամասն Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացույց»-ի.– ՊԲՀ, 1989, N 2, էջ 26-28: Ն ո ւ յ ն ի՝ Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ.– «Պատմա-բանասիրական հանդես», 1994, N 1, էջ 259–265:

85 Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 261–263:

86 S t r a b o, XI, 9, I:

87 ԱՄԽ, էջ 40:

որ պարսկական Կոմշ-Կոմիսենեի գրությունն ազդել է հայկական Կոմիսենեի ուղղագրության վրա, ուստի գտնում ենք, որ վերջինս մեզ է հասել ոչ անաղարտ վիճակում: Ամենից առաջ ենթադրելի է, որ կարող էին չփոթվել հունարեն Κ և Σ տառերը, իսկ պարսկական Կոմիսենեի ազդեցությամբ μ-ի կարող էր վերածվել ν-ն, հետևաբար հայկական Կոմիսենեի նախնական տեսքը պետք է լիներ Σωιστηνή: Եվ քանի որ հունական ω-ն արտահայտում է հայերենի «ով» կապակցությունը, ապա Ստրաբոնի Կոմիսենեն ոչ այլ ինչ է, եթե ոչ Սովնիսենե կամ Սունիսենե, որը փաստորեն անունով ևս անմիջականորեն կապվում է Սյունիքի հետ: Սեպագրագետ Հ. Կարագյոզյանի կարծիքով, չի բացառվում, որ Κ-ի և Σ-ի ոչ մի շփոթ էլ տեղի չի ունեցել: Կոմիսենեի Κ-ն, ըստ նրա, կարող է և նախնական լինել և միայն ավելի ուշ հնդեվրոպական լեզուներին հատուկ հնչյունափոխական օրինաչափություններով, վերածվել է Σ-ի: Այլ խոսքով, Սյունիքի անվանումը սկզբնապես հնչել է Կյունիք (Կիունիք): Այսպես թե այնպես, երկու հնարավոր տարբերակների դեպքում էլ լեզվական քննությունը, մեր խորին համոզմամբ, գալիս է ամրապնդելու այն տեսակետը, որ Կոմիսենեն տարածքային առումով համապատասխանել է Սյունիքին: Միաժամանակ տրամաբանական է կարծել, որ չնայած Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման բացակայությանը, Սյունիքն իր հարավային մասով որպես ընաշխարհադրական միավոր գործնականում ձևավորված էր:

Մ. թ. II դ. Մեծ Հայքի թագավորությունում համաձայն Կլավդիոս Պտղոմեոսի նկարագրության, ձևավորվել էին վարչական մեծ միավորները նահանգ-աշխարհները: Դրանք, դատելով ըստ ամենայնի, կարող էին ստեղծվել Տրդատ I – Արտաշես թագավորի իշխանության տարիներին (52–76): Որքան էլ զարմանալի լինի, պտղոմեոսյան նկարագրության Մեծ Հայքի աշխարհների շարքում բացակայում է Սյունիքի անունը, իրողություն, որ առնվազն տարակուսելի է: Պտղոմեոսը Մեծ Հայքում՝ Կուր և Երասխ գետերի միջև հիշատակում է հետևյալ երկրամասերը. «... Կյուրոս (իմա՛ Կուր-Հ.Բ.) գետի մոտ՝ Օքարենե և Օտենե, Արաքս գետի մոտ՝ Կոլթենե և նրանից ներքև՝ Սոդուկենե, Պարյուագրես լեռան մոտ՝ Սիբակենե և Սակասլենե»[88]: Օքարենեն, որն ունի նաև Տոսարենե ընթերցումը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, Մեծ Հայքի Գուգարք աշխարհն է, Օաենեն՝ Ուտիքը, Սոդուկենեն՝ Ծավդեքը, որ այդ ժամանակ առանձին աշխարհ պետք է լիներ, Սակասլենեն, որ սրբագրելի է Սակասենե, Շակաշենը (=Գարդման): Գայթակղիչ է Կոլթենե անվան մեջ Գոլթնի հիշատակությունը տեսնելը, իսկ Սիբակենեն համարյա թե բոլոր ուսումնասիրողները սրբագրում են Սիրակենե և նույնացնում Շիրտկին[89]: Թերևս զարմանալ կարելի է, որ այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը և ուրիշներ, կատարել են նման սրբագրություն և տեղադրություն, քանի որ դա պարզապես անհնարին է: Մեր կարծիքով, Սի-

---

88 Claudii Ptolemaei Geographia, Voluminis Primi, Pars secunda, էջ 938. "... παρα δὲ τον Κυρον ποταμον ἥ τε Ὠδαρήνη καὶ η Ὠτηνη, παρα δὲ τον Ἀράξην ποταμον ἥ τε Κολθηνη καὶ ἡ ὑπ αὐτην Σοδουκηνη, παρα δὲ τον Παρυαδρην το ὄρος ἥ τε Σιβακηνη καὶ η Σακαπηνη".

89 Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն. Նշվ. աշխ, էջ 250: Հ. Ա Դ Ո Ն Ց. Նշվ. աշխ, էջ 300 և այլք:

բակենեն ոչ մի կերպ չի կարող նույնանալ Շիրակին և համարժեք է Սյունիքին: Թվարկման աշխարհագրական հերթականությունը, որով հիշվում են նշված երկրամասերը, խոսում է մեր եզրակացության օգտին: Սոդուկենեն, որն անտարակույս Ծավդեքն է, չէր կարող Գոդթնից ներքև գտնվել, ուստի մնում է ենթադրել, որ Օտենեից հետո հիշատակված Կոլթենեն, որը նախորդում է Սոդուկենեին, կարող է և նույնանում է Կասպքին, որից ներքև աշխարհի այն ժամանակվա պատկերացմամբ, կարող էր գտնվել Սոդուկենեն-Ծավդեքը: Թե ինչպես է Կասպքը աղավաղվել և վերածվել Կոլթենեի, մենք բացատրել դժվարանում ենք, որովհետև այդ հնագրական հատուկ պատրաստություն է պահանջում, սակայն հիշյալ երկրամասի տեղադրությունը Կասպք-Փայտակարանի շրջանում չի կարող առարկություններ հարուցել: Աշխարհագրական առումով բացառվում է Շիրակի և Շակաշենի սահմանակցությունը, ուստի Սիբակենեի համար, որը սահմանակցել է Սակապենե-Շակաշենին, պետք է գտնել այլ բացատրություն: Բայց չէ՞ որ Σιβακηνή-ն կարելի է սրբագրել ոչ միայն Σιρακηνή, այլև Σισακηνή, որը գրչագրական առումով նույնիսկ ավելի հավանական է, քանի որ հեշտությամբ կարող են շփոթվել σ և δ տառերը: Իսկ Սիսակենեն կարող է և նույնանում է Սյունիք աշխարհի Սիսական գուգահեռ անվանը: Ինչպես տեսնում ենք, Սյունիքը որպես աշխարհ տեղ է գտել Պտղոմեոսի նկարագրության մեջ, իսկ նրա Սիսակենե-Սիսական անվանումը, դժվար չէ տեսնել, պայմանավորված էր Մեծ Հայքում հաստատված և պետես լիովին չհայացած Պարթև Արշակունի դահակալների վարչատարածքային գործունեությամբ: Պատահական չէ, որ Պատմահայրը Սիսական անվանումը համարում է պարսկական ձև:

Սիսակենե-Սյունիքը կարող էր սահմանակցել Շակաշենին Քաշաթաղ լեռներով (այժմ՝ Սևանի լեռնաշղթա), հետևաբար գոնե II դ. կեսերին Գեղարքունիքը վարչականորեն մտնում էր Սյունիք աշխարհի մեջ: Թե ե՞րբ էր կատարվել այդ միացումը, մեզ հայտնի չէ: Պարզ չեն նաև շարժառիթները, սակայն տոկա է աշխարհացույցյան Սյունիք աշխարհի ձևավորման փաստը: Ըստ երևույթին, Գեղարքունիքի վարչական միացումը մնացյալ Սյունիքին կատարվել է Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման ժամանակ Տրդատ I-ի կողմից, ուստի միանգամայն ճիշտ է Ս. Երեմյանը, որի կարծիքով Ծավդեացվոց, Շակաշեն-Գարդմանացվոց և Ուտեացվոց իշխանություն-կողմնակալությունները ստեղծվել են Տրդատ I-ի կողմից[90]: Մնում է լոկ այդ շարքին ավելացնել նաև Սյունիք-Սիսականը:

Աշխարհացույցյան նկարագրությունը հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Սյունիքի սահմանների մասին: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Սյունիքի նկարագրության առաջին մասը հակասության մեջ է երկրորդի հետ: Այսպես, «Թ. Աշխարհ Սիւնիք. ընդ մէջ կալով Երասխայ եւ Արձախայ, յելից Այրարատոյ» հատվածից պարզորոշ երևում է, որ հարավում և հարավ-արևմուտքում աշխարհի սահման հանդիսացել է Երասխ գետը, արևելքում՝ Արցախը, իսկ արևմուտքում և մասամբ հյուսիսում՝ Այրարատը: Սակայն, երբ քարտեզագրում ենք Սյունի-

90 Հայ ժողովրդի պատմություն. հ. Ա, Երևան, 1971, էջ 836:

քի և հարևան Վասպուրականի գավառները, պարզվում է, որ Երասխով անցնում է Սյունիքի ընդհանուր սահմանների մի չնչին մասը, որը չպետք է բնորոշիչ լիներ նկարագրության համար: Տվյալ վիճակն արձանագրելու համար «Աշխարհացույց»-ի հեղինակը կարող էր պարզապես գրել. «Թ. Աշխարհ Սիւնիք. ընդ մէջ կալով Վասպուրականի եւ Արձախայ, յելից Այրարատոյ»: Այս կարող է ունենալ միայն մի բացատրություն: Սյունիքի նկարագրության առաջին մասը վերաբերում է մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ Սյունիք աշխարհի սահմանն անցնում էր հարավում և հարավարևմուտքում Երասխ գետով, իսկ երկրորդ մասն արտացոլում է «Աշխարհացույց»-ի ստեղծման ժամանակի պատկերը: Մովսես Խորենացին, օգտագործելով արխիվային նյութերը, մասնավորապես աշխարհագրային փաստաթղթերը, առանց փոփոխության վերցրել է նրանց տեղեկությունները Սյունիքի աշխարհագրական դիրքի վերաբերյալ՝ առանց փորձելու համաձայնեցնել նկարագրության առաջին մասը երկրորդին: Ժամանակագրական առումով Սյունիքի նման աշխարհագրական դիրքը և սահմանները կարող էին վերաբերել հետպտղոմեոսյան շրջանին մինչև IV դ., երբ ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը փլուզվեց՝ տեղի տալով ավատատիրական վարչական բաժանման նոր սկզբունքներին: Ուստի առավել հավանական է ենթադրել, որ հեղինակի օգտագործած աշխարհագրային նյութերը վերաբերում են III դ., երբ քաղաքական անկայուն դրության և երկիրը պարսկական թեկուզև կարճատև ռազմակալման ու կառավարման, ինչպես նաև Տրդատ III-ի հայոց գահին վերահաստատվելու հետևանքով հաճախակի անցկացվում էին Մեծ Հայքի թագավորության հանգամանալից աշխարհագրեր: Որ իրոք Սյունիքի հարավային և հարավարևմտյան սահմանն ամբողջությամբ անցել է Երասխ գետով, վկայում են մի շարք այլ տեղեկություններ ևս: Համաձայն Պատմահոր մի արժեքավոր վկայության՝ Մարդպետական իշխանությունը տարածվել է Ատրպատականի սահմաններից մինչև Ճուաշ և Նախճավան[91], որից պարզվում է, որ հին շրջանում Նախճավանը չի մտել Մարդպետականի և դրանով իսկ Վասպուրականի մեջ: Պատմահայրը և նրան հետևող Ստ. Օրբելյանը սյունյաց ծագում են վերագրում Գողթնի իշխաններին[92], որն, ինչ խոսք, նույնպես խոսում է վերջինիս հին ժամանակներում Սյունիքին պատկանելու մասին: Ոչ պակաս կարևոր է սյունյաց պատմիչի այն տեղեկությունը, որում նա՝ չհիշատակելով Նախճավան գավառը, Նախճավանը համարում է Սյունիքի մայրաքաղաք[93]: Ինչպես վերը տեսանք, Ստ. Օրբելյանը Երնջակը և Գողթնը համարում է մեկ գավառ, իսկ մեկ այլ կապակցությամբ նա Գողթնը և Օրդվատ գյուղը համարում է Սիսական աշխարհի մաս. «Ի

91 Մ. Խ ո ր ե ն ա ց ի. գ. Բ, գլ. է:

92 Նույն տեղում, գիրք Բ, գլ. Ը: Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 23-24. «... և իշխանք Գողթան ոչ եթէ յայլմէ տոհմէ էին, այլ ի նոյն Սիսական ցեղէ, ըստ մասին ի ժառանգութիւն առեալ էին զայս գաւառ, որպէս ցուցանէ քեզ Մովսէս Խորենացի»:

93 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 14: Ենթադրել, թե այն արտացոլում է զարգացած միջնադարի քաղաքական կացություն, երբ Նախճավան քաղաքը կարճ ժամանակով միացվեց Սյունիքին, քիչ հավանական է: Մենք հակված ենք կարծելու, որ այս տեղեկությունը ևս վերաբերում է շատ հին ժամանակներին, երբ Նախճավան քաղաքը հանդիսանում էր Սյունիքի կենտրոնը:

պառնայն Բարդուղիմեոսի ի Պարսից անցեալ ընդ Ատրպատական գայ իւրով աշակերտաքն. և անցեալ ընդ գետն Երասխ մտանէ ի սահմանս Սիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յՈրդվատ գեղջ և յԱրևիս գաւառ և ի տունն Բաղաց և ի Գողթն»[94]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկությունը վերաբերում է Բարդուղիմեոս առաքյալի գործունեությանը (թեկուզ և ավանդական), մենք կարծում ենք, որ այն պարունակում է վարչական հին իրողություններ, երբ Գողթնը իրոք մտնում էր Սյունիքի մեջ: Վերջապես տնտեսական կապերի և բնաշխարհագրական ամբողջականության տեսակետից վարչական սահմանի անցկացումը Երասխ գետով ավելի պատճառաբանված էր, քան դրա առնելը Սյունյաց լեռների արևմտյան լանջերով, որի հետևանքով Սյունիքն իրենից ներկայացնում էր իրար հետ թույլ կապված չորս ամփոփ բնաշխարհագրական շրջանների հավաքածու: Դրանք էին՝ Գեղամա լճի ավազանը, Վայոց ձորը, Ճահուկ-Երնջակի շրջանը և Աղավնո ու Որոտան գետերի ավազանը: Սակայն Սյունիքի մեջ Նախճավանի և Գողթնի գտնվելու դեպքում, դրանք, գոնե դրանցից երկքը, սերտորեն իրար էին կապվում Նախճավանում խաչաձևվող ճանապարհների շնորհիվ: Այն հեռավոր ժամանակներում, երբ Սյունիքի հարավային և հարավարևմտյան սահմանն անցնում էր Երասխ գետով, ամենայն հավանականությամբ, եթե չասենք անվերապահորեն, գոյություն չեն ունեցել Ճահուկ և Երնջակ գավառները, որոնք համապատասխանաբար մտել են Նախճավան և Գողթն գավառների մեջ կազմելով բնաշխարհագրական ամբողջական տարածքներ: Նման եզրակացության կարելի է գալ վերը բերված տվյալներից: Այդ ժամանակներում Գողթնի մեջ պետք է մտներ, ինչպես վերն ասվել է, նաև Արևիքը:

Սյունիքի աշխարհացույցյան սահմանների ձևավորումը տեղի ունեցավ, ամենայն հավանականությամբ, արդեն III դարում: Մեզ անհայտ պատճառներով արքունիքը Նախճավան և Գողթն գավառների արքունական տիրույթներն անջատեց Սյունիքից և կցեց Մարդպետականին: Հնարավոր բացատրությունը թերևս այն է, որ արքունիքը նպատակահարմար գտավ արքունի տիրույթները միացնել արքունիքի սեփականություն հանդիսացող Մարդպետականին, որի արդյունքում սյունյաց իշխանի ժառանգական տիրույթները սահմանազատվեցին արքունի հողերից[95], իսկ Երասխի ավազանով անցնող մայրուղին հայտնվեց արքունիքի անմիջական վերահսկողության ներքո:

Մեծ Հայքի պատմությունյան նկարագրության համաձայն՝ Սոթք գավառը պետք է գտնվեր Սոդուկենե-Ծավդեքում, որի կենտրոնը, գտնելով ամեն ինչից, պետք է հանդիսանար Սոթք ավանը: «Աշխարհացույց»-ի նկարագրության մեջ Սոթքն արդեն Սյունիքի գավառներից է: Բնական է ենթադրել, որ այդ անցումը կատարվել է Ծավդեից իշխանության վերացումից հետո: «Զորանամակ»-ում հիշատակված ոչ մեծ ռազմական կարողություն ունեցող իշխանների թվում հանդիպում է «Սոդացի» անունը[96]: Սակայն

---

94 Նույն տեղում, էջ 21:

95 Ր. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, N 3, էջ 125-126:

96 «Զորանամակ», տե՛ս Հ. Ա ղ ա յ ա ն. Նշվ. աշխ. էջ 251:

այդ նույն փաստաթղթում հանդիպում է նաև Ծավդեից իշխանության անունը, որը և կասկածելի է դարձնում առաջինի գոյությունը նույն փաստաթղթում: «Զորանամակ»-ի հպանցիկ քննությունն անգամ բացահայտում է, որ «Սոդացի» անունն ավելացված է հետագայում: Այսպես, անդրադառնալով իշխանական ռազմական ուժի մեծությանը, «Զորանամակ»-ը նշում է. «... եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ՁԳ-ից հազարաց թող զսպասաւորս դրանն արքունի որ է ոստանդ որք ի պատերազմ ելանէին ընդ ա[ր]քայի եւ մարդապետական որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որ է հարիւր եւ քսան հազարաց»[97]: Ստացվում է, որ իշխանական զորագնդերի մարտիկների թիվը 84000 էր, սակայն, երբ մենք գումարում ենք դրանց մարտիկների թիվը առանձին-առանձին վերցրած, ընդհանուր գումարը կազմում է 84100, որը վկայում է, անկասկած, հետագա ընդմիջարկման մասին: Դրեթե առանց սխալվելու կարելի է պնդել, որ մուծված անուններից մեկը «Սոդացի»-ն է: Ծավդեից իշխանությունը գոյություն ուներ Տրդատ III-ի գահակալության շրջանում[98], սակայն այլևս չի հիշատակվում Խոսրով II Կոտակի և Տիրանի թագավորության տարիներին: Արշակ II-ի դեմ ապստամբած երկրամասերի թվում Ծավդեքի փոխարեն հանդիպում է «ամուր դաւառն Արձաիայ» երկրամասը[99], որը կրկին միացվում է Մեծ Հայքի թագավորությանը Պապ արքայի իշխանության օրոք[100]: Հավանական է ենթադրել, որ Ծավդեից իշխանությունը վերացվեց Խոսրով Կոտակի գահակալման շրջանում, երբ արքունիքը բացահայտ պայքար էր սկսել խոշոր ավատատիրական իշխանությունների դեմ, մասնավորապես այն իշխանությունների, որոնք կարևոր ռազմաստրատեգիական դիրքեր էին զբաղեցնում: Հետևաբար, տեսականորեն, «Սոթքի» կամ «Սոդացի» իշխանությունը կարող էր հանդես դալ միայն IV դ. 30-ական թվականներից հետո:

Ունենալով վերը կատարված քննության արդյունքները, մենք այժմ կարող ենք արդեն անդրադառնալ այն հարցին, թե որքա՞ն էր Սյունիքի տարածքում դավառների քանակությունը Պլինիոս Ավագի ժամանակներում: Ինչպես վերը նշել ենք, այդ շրջանում, հավանաբար, դեռևս գոյություն չունեին Զորքը և Արևիքը, որոնք համապատասխանաբար պետք է մաս կազմեին Բաղքի և Գողթնի: Եթե Զորքի առաջացումը կարելի է բացատրել սյունյաց իշխանների կողմից ոստան դավառ ձևավորելու խնդրով, ապա Արևիքի հանգես դալը կարելի է մեկնաբանել արքունական տիրույթների Սյունիքից անջատելով: Գողթնի մաս կազմող Արևիքը՝ Գողթնի արքունի տիրույթները Մարդպետականին միացնելուց հետո, մաս կազմելով սյունյաց իշխանի ժառանգական տիրույթների, վերածվեց առանձին գավառի: Այդ նույն ձևով Գողթնի սյունյաց իշխանին պատկանող մյուս

97 Նույն տեղում, էջ 252: Հարկ է նշել, որ Ն. Ադոնցի հրատարակած «Զորանամակ»-ի բնագրում սխալմամբ Բագրատունիների ռազմական կարողությունը գույց է արված 1000 կինվոր 1500-ի փոխարեն (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 424):

98 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Դ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, էջ 414:

99 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, դպր. Դ, գլ. Ծ:

100 Նույն տեղում, դպր. Ե, գլ. ԺԲ:

տիրույթները ձևավորվեցին որպես երնջակ գավառ, իսկ Նախճավան գավառի մեջ մտնող տիրույթները, որոնք զբաղեցնում էին Սյունյաց լեռների նախալեռնային և լեռնային շրջանները, կազմեցին Ճահուկ գավառը: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ նոր ձևավորվող գավառները սովորաբար իրենց անունն ստանում էին կենտրոն հանդիսացող բնակավայրերից կամ էլ տեղանքի ու կլիմայական առանձնահատկություններից: Տեղանքը և մակերևույթն էին տվել իրենց անունը Ձորքին, իսկ տաք ու արևոտ կլիման՝ Արևիքին: Նախճավանից հյուսիս գտնվող Վայոց ձոր գավառը տարածվում էր մինչև Երասխ գետը՝ ներառնելով Շարուրի դաշտը: Պատմագիտության մեջ տարածում գտած այն կարծիքը, թե Շարուրը եղել է առանձին գավառ և մտել Այրարատի մեջ[101], սկզբունքորեն քննություն չի բռնում: «Աշխարհացույց»-ում Շարուրի դաշտի գավառ լինելու մասին խոսք չկա: Այնտեղ ասված է, որ «Ուրծաձոր եւ Արածոյ կողմն, ընդ մէջ կալով Վայոց ձորոյ եւ Շարուր դաշտի, ընդ որ հոսի գետն Արտանն առ Մարենայ քաղաքով, անցանելով ի հարաւ խառնի յԵրասխ»[102], այսինքն՝ Այրարատի Արածո կողմն գավառը գտնվել է Վայոց Ձորի և Շարուրի դաշտի միջև, որից չի բխում, թե վերջինս Այրարատի գավառներից է: Ըստ էության նույնն է ասված նաև «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրության մեջ, ըստ որի Ոստան Դվնա գավառը տարածվել է «...մինչև ցդաշտն Շարուր»[103], այսինքն՝ Շարուրի դաշտը դուրս է մնացել Այրարատի Ոստան Դվնա գավառից: Պարզելով, որ Շարուրը գավառ չի եղել և Այրարատի մաս չի կազմել, միանգամայն հասկանալի է դառնում, որ Շարուրը կարող էր մաս կազմել միայն Վայոց ձոր գավառի, որի սահմանները կարծես թե պատճենել էին ցարական իշխանությունները՝ ստեղծելով Շարուր-Դարալագյազի գավառը[104]: «Աշխարհացույց»-ի ստեղծման ժամանակներում Շարուրն արդեն Վայոց ձորի մաս չէր կազմում, ուստի մնում է ենթադրել, որ այն՝ արքունական տիրույթների մաս կազմելով, պարզապես միացվել է Նախճավան գավառին: Սկզբնապես գոյություն ունեցող գավառների շարքից պետք է հանել Սոթքը, որի տարածքը պետք է մտներ սկզբում Ծավդեից աշխարհի մեջ, իսկ այնուհետև միացվեր Գեղարունիքին և միայն ավելի ուշ վերածվեր ինքնուրույն գավառի կոչվելով կենտրոն բնակավայրի անունով: Եվ վերջապես Կովսականը, որն իր անունը ստացավ Կովսական բնակավայրից, մինչ այդ պետք է մաս կազմեր Բաղք գավառի: Ի մի բերելով վերը կատարված վերլուծության արդյունքները, որոնք, անշուշտ, չի կարելի վերջնական համարել նյութի սղության պատճառով, այնուամենայնիվ, մեզ իրավունք են տալիս ասելու, որ սկզբնապես գոյություն են ունեցել Գողթն, Նախճավան, Վայոց ձոր, Գեղարունիք, Ծղուկ, Աղահեճ, Հաբանդ և Բաղք գավառները, այսինքն՝ թվով 8-ը: Եթե մի պահ վերանանք Նախճավանից, որի անվան բացատ-

---

101 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 462: Հեղինակը հստակ կարծիք չունի Շարուրի վարչական կացության մասին: Նա միայն նշում է, որ Թովմա Կիլիկեցին և Թովմա Արծրունին Շարուրը համարում են գավառ (Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 253: Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 73):

102 ԱՄԽ, էջ 34:

103 К. П. Патканов. Նշվ. աշխ., էջ 20:

104 Տե՛ս ռուսական 10-վերստանոց քարտեզի համապատասխան պլանշետը:

ությունը մինչև օրս էլ վեճեր է ծնում, ասվա կարելի է ասել, որ մնացած զավառանունները ծագում են ցեղերի կամ ցեղային երկրների անուններից, որը հավաստում է նրանց հին շրջանում վարչական ձևավորման մասին:

Սյունիքը աշխարհացույցյան սահմաններով, հանդիսացել է սյունյաց իշխանների ժառանգական տիրույթը և Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումից հետո կարևոր ու առանձնահատուկ դիրք էր զբաղեցնում Հայկական կամ Արմն մարզպանությունում կազմելով վերջինիս երեք կարևոր վարչական միավորներից մեկը[105]*: «Զորանամակ»-ում սյունյաց իշխանի ռազմական ուժը ներկայացված է 19400 մարտիկներով*[106]*, սակայն քննությունը ցույց է տալիս, որ այդ թվի մեջ ներառնված են Հայկական մարզպանության Տանուտիրական գնդի 15 հազար մարտիկները, իսկ սեփական ուժերը կազմել են 4400 մարտիկներ փոքր-ինչ զիջելով Դուդարաց բդեշխության ռազմական ուժերին: 571 թ. Սյունիքը վարչականորեն մտցվեց Ատրպատականի աշխարհադրի մեջ: Այդ մասին Սեբեոսը գրում է. «... ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից. զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դբունայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի»*[107]*: Սակայն դատելով հայկական V–VII դդ. սկզբնաղբյուրների և Զաքարիա Հռետորի հաղորդած տեղեկություններից (554 թ), Սյունիքը դեռ մինչև 571 թ. լայն ինքնավարություն էր ձեռք բերել Հայկական մարզպանության շրջանակներում*[108]*: Զաքարիա Հռետորը Սյունիքը հիշատակում է Sisagān անունով որպես Arran-ին և Gurzān-ին համազոր երկիր*[109]*: Սեբեոսի վկայությամբ Սասանյան պետության կործանումից հետո Սյունիքը կրկին վարչականորեն միանում է Հայքին. «...իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչև բարձաւ թագաւորութիւնն պարսից և տիրեաց իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց»*[110]*: Սյունիքն իր սարածքը աշխարհացույցյան սահմաններով որպես քիչ թե շատ կայուն սմբոպլջական միավոր, պահպանեց մինչև IX դ. սկզբները*[111]*, որից հետո այն աստիճանաբար բաժանվում է սյունյաց իշխանական ընտանիքի տարբեր ճյուղերի միջև: Սյունիքի հետագա ճակատագիրը, որն ըստ էության չի առնչվում նրա որպես աշխարհի (նահանգի) գոյության հետ, դուրս է սույն ուսումնասիրության շրջանակներից, ուստի և դրան չենք անդրադառնում*[112]*:*

---

105 Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 131–133:

106 «Զորանամակ», տե՛ս Հ. Ա դ ո ն ց. *Նշվ. աշխ. էջ 251:*

107 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 67–68:

108 Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 131–134:

109 Н. П и г у л е в с к а я. Сирийские источники по истории народов СССР. М.—Л., 1941, с. 165. *Տե՛ս նաև Ասորական աղբյուրներ. Ա, թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 314:* Н. А д о н ц. *Նշվ. աշխ. էջ 423:*

110 Ս ե բ ե ո ս, էջ 175:

111 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 158:

112 Կարևորություն է ներկայացնում Փոքր Սյունիքի խնդիրը, սակայն քանի որ այն

ОБЛАСТЬ СЮНИК ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО «АШХАР(h)АЦУЙЦУ» («Армянской географии») (Историко-географические наблюдения)

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

Первоначально собственно Сюник охватывал территорию между рекой Ерасх(Аракс) и областью Арцах без бассейна озера Севан и представлял собой этно-племенную общность. Судя по данным греческого географа Страбона, на заре нашего летосчисления, она называлась *Кюник* и под эллинизированной и искаженной формой *Комисене* (должно было быть *Кюнисене*) нашла отражение в его «Географии». Сюник как область или ашхар(h) Великой Армении окончательно сформировался при армянском царе Тиридате I и был описан знаменитым греческим географом Клавдием Птолемеем под названием *Сисакене* (=Сисакан, персидская форма наименования области), сохранившимся в искаженном чтении *Сибакене*. Во второй половине III или в самом начале IV вв. равнинную часть левобережья реки Ерасх(Аракс) с административным центром городом Нахчаваном, явившуюся царским владением Аршакидов, царский двор отделил от наследственных земель сюникского княжеского рода и присоединил к области Мардпетакан. В результате перекройки административных границ и утраты экономически связывающей все уезды области равнинной части левобережья Ерасх(Аракс), Сюник в значительной степени теряет административную жизнеспособность. Первоначально область состояла из 8 гаваров или уездов, которые соответствовали упомянутым Плинием Старшим префектурам или стратегиям Великой Армении: Голти, Нахчаван, Вайоц дзор, Гелакуник, Цлук, Алахеч, Хабанд и Балк. После отделения царских владений от области в оставшихся под владычеством сюникского князя частях гаваров Нахчаван и Голти были образованы гавары Чахук, Ернджак и Аревик. В итоге феодализации возникли также гавары Дзорк и Ковсакан на территории Балка, а вслед за упразднением Цавдейского княжества к Сюнику была присоединена восточная часть бассейна озера Севан в качестве самостоятельного гавара под названием Согк. Сюник пользовался особым статусом в составе Армянского марзпанства и сохранил свою территорию в указанных «Ашхар(h)ацуйцем» границах до начала IX в. При дальнейшей феодализации края процесс раздробления гаваров продолжался.

առնչվում է Արցախ աշխարհին, մենք դա նույնպես քննության չենք առնում:

THE REGION OF SIUNIK' OF GREATER ARMENIA ACCORDING TO THE "ASHKHARHATSOYTS" ("Armenian Geography")
(Historical -geographical observations)

BABKEN HARUTYUNYAN

S u m m a r y

Originally the Region of Siunik' Proper included the territory between the River Araxes and the Region of Artsakh except the basin of the Lake Sevan and presented itself an ethno-tribal community. Judging by the data of the Greek geographer Strabo, at the daybreak of our era the Region assumed the name of *Kiunik*,' reflected under the hellenized and distorted form of *Komisene* (it had to be *Kiunisene*). Siunik' as a region or ashkharh of Greater Armenia was finally formed under the Armenian king Tiridates I and was described by the famous Greek geographer Claudius Ptolemy under the name of *Sisakene* (=*Sisakan*, the Persian form of the name of Siunik), preserved in the distorted reading of *Sibakene*. In the second half of the 3rd century or at the very beginning of the 4th century the plainspart of Siunik' situated on the left bank of the Araxes with the administrative center of the city of Nakhchavan or Nakhidjevan, being the domain of the Armenian Arshakids was separated from Siunik ' and joined the royal ownership of Mardpetakan (=East Vaspurakan). In the result of the administrative boundary cutting out again Siunik' lost its administrative viability. Originally the region consisted of eight gavars or districts, corresponding to the strategies or prefectures of Greater Armenia, mentioned by Plinius the Elder: *Goltn, Nakhchavan, Vayots dzor, Gelakunik', Tzluk, Alahech, Haband and Balk'*. After the separation of the royal ownerships from the rest of the districts of Nakhchavan and Goltn were created the districts of Chahuk, Erndjak and Arevik'. In the result of feudalization the districts of Dzork and Kovsakan were also formed on the territory of Balk' and after the abolishment of the principality of Tsavdek' the eastern part of the basin of Lake Sevan joined Siunik' as an independent district under the name of Sothk' or Sotk'. Siunik, enjoyed special rights in the Marzpanae of Armenia and kept its territory in the boundaries mentioned by "Ashkharhatsoyts" until the beginning of the 9th century. During the further feudalization of the region the process of breaking up of districts continued.